

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԿԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Կ Ո Ւ Ի Ի Տ Ե Ն Դ Ը

Էլ թող լռեն չարաշուք ձայները: Թող Հայաստանի լեռներից հնչող անընդհատ որոտը լռեցնե նրանց, որոնք տրամադիր են բացասել հայի մեջ ռազմական կորուվը և դատապարտել նրան յաւէտ ստրկութեան:

Թող ոչ որ այլևս, ոչ մի յոռետես, ոչ մի հայատեաց, ոչ մի ազգադաւ չ'օրօրէ իրեն պատիր յոյսերով՝ թէ մի օր կարող է ցամաքած տեսնել այն ճակատագրական, տարերային հոսանքը, որի անունն է հայկական շարժում:

Այս տենդային ու ահեղ շրջանը, հերոսների այս սքանչելի բոլորը, դիւցազնական—և որքան անհաւասար— ճակատամարտների այս անհատնում շարքը, որ գալիս է մի երկարատև ու զարհուրելի ճգնաժամից յետոյ, բայց մանաւանդ այս շնաշխարհիկ անձնութեան թիւերը ամենասարսափելի արկածների առաջ, մահի, վտանգի այս արհամարումը, որ բնորոշ է հայոց կեանքի նորագոյն շրջանի համար, — ինչ է վկայում այս բոլորը, եթէ ոչ հայ շարժման անսովոր կենսունակութիւնը, եթէ ոչ նրա անխախտ յարատեւումը:

Ինչ են արգելքները—թէկուզ և նիւթած երկրորդ մահաբոյր ապարանքներում— մի կուռ, աներկիւղ բանակի համար, որը ինքզինքը ընծայել է մահուան:

Իւր ահա այդ շարժումն ու անխնայ բանակը, որ մի չնչին մեծութիւն է հարկը հազարաւոր թշնամու զօրքի ու թնդանութեան դիմաց—ահա նա անդադար, գրեթէ միաժամանակ լոյս է ընկնում հայրենիքի զանազան ծայրերում, կոտորում է և կոտորում, անգնահատելի զոհեր է տալիս, բայց և գրեթէ միշտ ճողոպրում է փոթորիկներից, ապաւինում է անյայտ դարանները, լցնում է իր նօսրացած շարքերը, նորից գահավիժում թշնամու վրայ, նորից հարւածում:

Սասունը մենակ չմնաց իր ցնցումներով, մենակ, արիւնլայ և անարձագանք, ինչպէս 1894-ի սև թաւանին: Հայ դիմագրութիւնը՝ բարբառոսաբար ճնշւած բարձր լեռներում՝ շարունակեց պարտիզանական կռիւների ձևով դաշտերի վրայ, և հեռագիրները անընդհատ ծանուցեցին եւրոպական մամուլին արիւնահեղ ճակատամարտներ ֆէդայիների ու զօրքերի միջև՝ մերթ էրզրումի, մերթ Բիթլիզի ու Վանի վիլայեթում: Մայիսի սկիզբներին Աշոտ-Երկաթի եր իր խորով ընդհարում:

Քրդերի հետ Արճէշի մօտ, Խօջալուի ձորակում. ուսմբերի տարափից սարսափահար փախչում է թշնամին, թողնելով 50-ից աւելի դիակներ: Յունիսի մէջ Կալօնի ձիաւոր խումբն է կուռում Զիլինի աւերակներում 4,000-ից աւելի զօրքերի ու քրդերի դէմ. մի կատաղի կռիւ, որ խլում է հայերից 25 քաջեր, իսկ թշնամու շարքերից մի քանի հարիւրներ:

Յուլիս ամսի մէջ „Կաշնակցութեան“ արշաւախումբը, թւով 102 հոգի, գրաւում են Զօրի ու Մօսուլի զօրանոցները և ուսմբերով ու գնդակներով սոսկալի ջարդ են տալիս տաճիկ պահակներին: Ոտքի է կանգնում ամբողջ Աւաշկերտի թիւրք ու քիւրդ խուժանը. հայ ապստամբները դիմագրաւում են նրանց և զօրքերին, կոտորում են 400 հոգի, իրենցից զոհ տալով 27 մարդ միայն:

Գրեթէ միաժամանակ մի ուրիշ արշաւախումբ, 61 հոգուց բաղկացած, Ուսուրդի ու Թօրգոմի առաջնորդութեամբ, կռւի է բռնում տաճիկ զօրքերի հետ Օլթիի շրջանում, ոչ հեռու ուստական սահմանագլխից, և այդտեղ... խաղաղում է մէկը այն զորհուրելի ողբերգութիւններից, որոնցով ուստական անհոգի վայրենութիւնը պիտի յաւերժանայ համաշխարհային պատմութեան մէջ—ուստ սահմանապահ զօրքը օգնութեան է հասնում նեղն ընկած տաճիկներին, կոտորում է հայ ապստամբներին, չնայած սրանց ձեռնպահութեան ու կրկնակի յորդորներին, ապա մերկացնում է, ջարդում, այլանդակում նահատակներին և թիւրքերի հետ գըրկախառնւած՝ օրգիաներ է սարքում դիակների շուրջը... Երբէք, երբէք հայը չի մոռանայ Լանկթամուրական այդ սարսուղացից գաղանթութիւնները, երբէք նրա անարգած, արիւնոտւած սիրտը այսքան գարշանք, այսքան խոր տաւելութիւն չէր զգացել դէպի „քրիստոնեայ“ համիդականները, որոնք իրենց հրէշութիւններով մահմետական դահիճներին անգամ գերազանցեցին:

Փոյթ չէ. նոյնիսկ այդ ձիւաղային արարքները „քրիստոնեայ հովանաւոր“ պետութեան կողմից, նոյնիսկ և րկու ֆրօնտի վրայ կուելու անողոր անհրաժեշտութիւնը չի սարսափեցնում հայ յեղափոխականին. պատմութեան անսիրտ տրամաբանութիւնը դրել է նրան երկու կրակի մէջ, շատ կրակների մէջ, և նա անխռով հնազանդութեամբ տանում է իր բաժին լուծը:

Զարմանալի շրջան ենք ապրում. վերջին երեք ամիսների ընթացքում ալէկոծում և աղմուկան տեսնելը հասնում են շտեմուած սահմանների. հայկական բարձր-

ւանդակը երբեք, թերեւ, վկայ չէ եղել այսքան սրտա-
պնդող տեսարանների, այսքան արագութեամբ իրարու
յաջորդող՝ բուն, հերոսական ընդհարումների:

Բասենի, Սասունի, Օլթիի, Բագրեւանդի կռիւներից
յետոյ՝ ահա Բիթլիզի վերայէն է ասպարէզ դառնում
արշաւանների գործունէութեան: Անդրանիկը՝
միշտ անհանգիստ, միշտ կռւի ծարաւ՝ իր մի բուռը
կարիճների հետ նետուում է շարունակ այս ու այն վաշտի,
զօրանոցի վրայ, մի օր նա յայտնուում է գաւառի մէջ, միւս
օր ուղղակի բազմամարդ քաղաքի կենտրոնում — Ինչ
փոյթ, թէ քաջի գլուխը գնահատուած է արդէն —
շանթի պէս զարնում է և անհետանում, թողնելով թըշ-
նամուն չլմած ու ահաբեկած:

Ահա Խանասորի Դ ու մ ա ն ն է երևան գալիս Վաս-
պուրականում իր ընտիր հեծելախմբով, կռւի է բռնում
մեծաքանակ քրդերի հետ և մի անգամ ևս յաղթանակով
դուրս է գալիս այն ծանօթ վայրերից, ուր նա շատ
անգամ նեղն է ձգել արիւնարբու աշիրէթներին:

Ահա վերջապէս հայ յեղափոխականները բանակ
դրած Վասպուրականի մայրաքաղաքում... Սարսափելի
անակնկալ: Յարձակման տպաւորութիւնը այնքան ու-
ժեղ է, որ հեռագրական գործակալութիւնները, չափա-
յանցնելով ծանուցանում են, թէ Անդրանիկը գրաւել է
Վանը: Տիրում է անհնարին սարսափ, հիւպատոսները
շտապում են այնտեղ, իշխանութիւնները իրարանցման
մէջ են, «զօրքերը գնում են ալատելու քաղաք»:

Ահա արդէն մի շաբաթ է ինչ կռւում են շարունակ,
և բազմաթիւ զօրքերը գեռ չեն կարողացել տիրել ապրս-
տամբներին:

Բարրիկադներ Վանում... Հայութեան բազմամարդ
այդ կենտրոնը, ուսկից վերջին տարիներս լսում ենք միայն
մատնութեան, դաւաճանութեան և ցածհոգի ստրկա-
ւտութեան ձայներ, — այսօր նա ծփում է ալէկոծութեան
մէջ, այսօր նա ցնցում է հայ ապստամբների աղաղակ-
ներից, այսօր նա զգում է գէթ վայրկենաբար, որ առօրեայ
գձուձ մտահոգութիւններից դուրս՝ կայ մի այլ կեանք, —
ֆէդայու կեանքը, կայ մի այլ հոգս, — հայրենիքի ազա-
տութեան գերադոյն հոգսը:

Զենքը շառաչում է երկրի բոլոր անկիւններում, թիւրք
վաշտերը մուրիսի պէս լցնում են գիւղ ու քաղաքներ,
դահիճը կատաղութեամբ վազում է իր որսի վրայ և մի
անգամ ևս ասպարդիւն փորձ է անում թնդանօթների
ծխի մէջ խեղդել հայկական շարժումը... Դիւանագի-
տութեան ներկայացուցիչները խնամքով արձանագրում են
իրողութիւնները, միշտ աւելի և աւելի համոզելով, որ
չէ կարելի կատակ անել մի շարժման հետ, որի ար-
մատները այնքան խոր են, և որ հայ մարտական կազ-
մակերպութիւնը ընդունակ է աւելի ցնցող իր ու-
ղով թիւնն եր ո վ յիշեցնել Լաւրոպային՝ իր պար-
տականութիւնները:

Մ Ա Ր Է Ի Տ Ա Ղ Ը

Ձէն շուխտ եզներ կուտամ տամի,
Քանի ուզին՝ թող ծախի.
Թուամք մ'առնեմ զիմ Կիկոյին,
Տամնիմ գրեմ ֆէդայի:

Իրեք ամիս մնաց թըմմի
Թամնիմ քըսան մէկ տարի
Ջնէլ, կտրիմ — ի՞նչն աւ պալուս,
Յոր չգրի ֆէդայի:

— Տննար յէնօր մա'րք տմուէր,
Էստեղ էկան տղերքներ,
Տեսա՞ր պզտիկ զէն ֆէդային
Քըսան տարու էլ չըկեր:

Ախ, տէր Աստուծ խոզիս չառնի,
Չուր Կիկոյին ես տեսնի,
Դօշին ֆըշանք, թուամք ի թե —
Ախ, յէնօր թող խոզ մոռնի:

Ախ, մորթեցին Սրգէն սաղ-սաղ,
Տւի ազգիս մէկ մատուղ.
Մէկ էլ կուտամ զիմ Կիկոյին
— Ազգ, շուխտ տղէս քըզ մատուղ:

Խեղճ ու կրակ, ձեռն էրնին
Մարէն թորկի՞ զիւր տղէն,
Սրգէյի պէս քուրդ ամօրէն
Գոյ սպանա՞ Կիկոյին:

— Յելիւր, լաօ, թող վարուցանք,
Էլ թող աղօթք, ժամ ու վանք,
Էնոնցից քե ֆայտա չըկայ,
Յելիւր, սազիւր քեոյ թուամք:

— Գնա՛, Կիկօ, թուամք բուցուր,
Ձալըմ դիւշմին վախեցուր,
Քեոյ մէօջ աղօր, ախ, հալիֆ խամ,
Դարդու սիրալիս խովացուր:

ՉԱՐԽԻ-ՖԱԼԱԿ
(Վան)

ԲԱԳՐԵՒԱՆԴԻ ԿՈՒՈՆԵՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան երկու արշաւանների գոր-
ծունէութեան ասպարէզ որոշած էր պատմական Բագ-
րեւանդ գաւառը, որի սահմանների մէջ գտնուում են
Հին-Բայազետն և Իւչքիլիսէի Ս. Յովհաննու վանքը:

Այս անգամ կռիւն աւելի դժուարին էր և ծանր
պարագաների մէջ գրւած:

Հայ յեղափոխականը չէր կարող մոռանալ սուլթան
Համիդի նենգաւոր քաղաքականութիւնը, Անդրանիկի
հետ ունեցած բանակցութիւնների ժամանակ. Սասունի
անպաշտպան մնացած գիւղերի կոտորածը, կանանց ու
երեխաների սրի քաշելը՝ նրա առաջ ձգւած էին Իւչ-
քիլիսէ, Ղուվիպուլադ, Ղարաբազար, Սէյդօ և Զուլան
աւերւած հայկական այն դժբախտ գիւղերը, որոնք զոհ
էին գնացել քրդական և տաճիկ զօրքերի բարբարոսու-
թիւններին մի երկու օր առաջ: Հազարաւոր ձայներ
«վրէժ» էին գոչում, և այս աղաղակները արձագանք
գտնում քաջ ֆէդայու սրտում: Տաճիկ կառավարու-
թեան յայտարարւած էր կռիւ: Հայ յեղափոխականն այս
անգամ յարձակողական գիրք պիտի բռնէր: Բագրեւանդ
արշաւող խմբերն իրենց նպատակակէտ ընտրել էին տաճ-
կաց զօրանոցները:

Նրանք յառաջ անցան:

Յուլիսի 11-ին, ըստաբացին, արևոյ Մասիսի փէշերում հանգչող Չնգլներ բարձունքների Ռէսի-Գոմերի բլուրի վրայ ծածանեցին երկու Պաշնակցական դրօշակներ: Այդ վերջին կայանն էր, ուր պէտք է տեղի ունենար զինւորական խորհուրդ, և որտեղից պիտի կատարւէր առաջին յարձակումը:

Այդ բլուրից դէպի արևմուտք, մի սիրուն տափարակի վրայ, երևում էր Մօսուլը, հայկական մի մեծ գիւղ, որի մի ծայրում հեռագիտակի միջոցով նկատուում էր զօրանոցը: Դէպի հարաւ, բլրի ստորոտում, մի ձորակի մէջ ընկած էր Զօրի պահականոցը:

Ոչ արեգակի այրող ճառագայթները և ոչ էլ երկար ճանապարհի յոգնածութիւնը ու տանջող ծարաւը չէին թուլացնում ազատութեան կոիւնների մէջ բախտ որոնող հայ զինւորի ոգևորութեան չափը: Նոյն բլրի լանջում, մի խոտաւէտ մարգագետնում, ձգւում էր փափաշտապատ տասնեակների շարքը մի դրօշակի տակ, իսկ մի փոքր հեռու, երկրորդ դրօշակի տակ կատարւում էր զինւորական խորհուրդ երկու խմբապետների, երեք օգնականների և բազմաթիւ տասնապետների մասնակցութեամբ: Դիտակները երբեմն դարձնում էին այս ու այն կողմ, չափում հեռաւորութիւններն ու յարմարաւոր դիրքերը և նորից խորհրդակցում մինչև որ կը պատէր մութը. ու մի մրափ տիրեց փոթորկալից առաւօտ գուշակող այդ ժամին:

Գիշերայ ժամը 2-ին օտի կանգնեց խումբը, խմբապետը նշան տւեց և շղթան շարժեց:

Առաջից գնում էր վախտը, պատկառանք ազդող դարաւոր կաշնին յիշեցնող խնկար:

Բլրի ստորոտում խումբը բաժանեց երկուսի, մեծ խումբը բռնեց Մօսուլ տանող ճանապարհը, իսկ փոքրը Զօր:

Գիշերային լուսութիւնը մի վայրկեան աղմկեց հրաժեշտի շշուկով և հեռաւորութեան մէջ փոքր առ փոքր անլսելի էին դառնում զենքերի շփման խուլ շաչիւնը:

Մօսուլի մի ծայրում, Բօրուն տանող ճանապարհի վրայ, ընկած էր անշուք զօրանոցը իր ցածիկ պարսպապատ բակով, որտեղ Իււքրիլիէի դէպքերի պատճառով աւելացրած զօրքերը, սենեակների փոքրութեան պատճառով, գիշերում էին բացօթեայ: Այստեղ եղող զօրքի թիւը ճիշդ հաշւով 160 էր, որոնցից 50-ը նորակոչներ: Զօրանոցից մի փոքր հեռու, գիւղական ջրաղացի մօտ, ցցւած էին երկու սպիտակ վրաններ օֆիցերների համար:

Երկու ժամայ ճանապարհ կտրելով՝ յուլիսի 12-ին, Արտաւազդ խումբը երեք կողմերից պաշարեց զօրանոցը և վրանները: Նրկու հոգի կտրում էին Բայազէտի հեռագրական թելը: Խմբից բաժանւելով, չորս ուղիքներ աննկատելի կերպով իրենց ձգեցին զօրանոցի կտուրը: Այդ ժամանակ միայն զօրանոցի շունը չաջեց, և հրացանի փողը կրթնած պահապան զինւորը սթափւելով՝ ձայն տւեց՝ «օ քիմ», այն ո՞վ է: Պահապանի ձայնը խեղդւեց կոկորդի մէջ, վալադ խնկար գնդակը ցած գլորեց պահապանին: Վայրկենապէս զօրքը ոտքի կանգնեց և զօրանոցի մէջ եղողները դուրս թափւեցին՝ շատերը շապկանց: Այդ վայրկենին երկու ուղիք միաժամանակ պայթեցին ուղիղ խոնւած զօրքի մէջ. աչ ու ձախ թափթփեցին գալարող դիակներ: Կենդանի մնացած զօրքը սարսափահար՝ զօրանոց մտաւ և զինւելով, ներսի հրամանների սարսափի տակ, փորձեց դուրս գալ բայց երրորդ և չորրորդ ուղիքները չէմբի մէջ աւերում գործեցին ջարդ:

ու փշուր անելով դուռը՝ ցած թափւող դիակների կոյտերի հետ միասին. կուր կենտրոնատեղին էր դա:

Իսկ այդ կենտրոնից մի փոքր հեռու, պարսպների վրայից տեղում էր գնդակների տարափը՝ աչ ու ձախ թշնամու դիակներ սփռելով: Զօրանոցի բակի մէջ իրարանցում էր տիրում, տղաները կորցրել էին իրենց գլուխը զօրքի շատութիւնից, երբ յանկարծ լսեց խմբապետի ձայնը՝ «Թշնամին, տղաներ», որը տեղացող գնդակների տակ մօտեցաւ հակառակ պարսպին: Արաններից դուրս թռած 16 զինւորները, որոնք պարսպի յետեից կրակ էին տեղում, ըստպէս յետեից պաշարեցին և տեղն ու տեղը ջարդ ու փշուր եղան. հէնց նոյն վայրկենին, մի փոքր հեռու, մթերանոցի մօտ, մի խումբ զինւորների մէջ պայթեց Համօյի ձգած ուղիքը. նրանցից միայն մէկը մնաց կենդանի:

Երկու ժամ շարունակ տեղացող ուժային և մօսինի հրացաններից արձակած կրակից յետոյ, տիրեց մի գերեզմանային լուսութիւն, զօրանոցում այլևս կենդանի մարդ չէր մնացել, մի փոքր թիւ միայն յաջողել էր զօրանոցի յետևի մի փոքրիկ դռնակից դուրս թափւել և գիւղի մէջ պատսպարան գտնել: Այդ էլ իսկոյն յայտնի եղաւ, երբ հրացանների և ուղիքների ձայները լսելուց յետոյ՝ հագիւ սիրտ առած, գիւղի տներից տղամարդիկ սկսանք դուրս գալ՝ զինւելով իսկոյն ատրճանակներով: Նրանք յայտնեցին, որ տների մէջ կան նաև գիշերող զինւորներ, որոնք ոչ մի յարգանք չեն տածում դէպի ընտանեկան սրբութիւնը: Այդ աւելի ևս կատաղեցրեց հայդուկին, սկսեց գիւղի մէջ, փողոցներում և տներում խուզարկութիւն, բաւականին զինւորներ հէնց այդտեղ ընկան: Գիւղը միանգամայն մաքրեց տաճիկ պիղծ զինւորներից:

Այդ կուռում, ճիշդ թւեր բերելով, Մօսուլի մէջ հայ ֆէդայու գնդակներին զոհ գնացին 120-130 տաճիկ զինւորներ, իսկ հայ զինւորներից ընկաւ մէկը և վիրաւորւեցին երկուսը:

Բ.

Չնգլներ կոչւող բարձունքների ստորոտում արևելքից դէպի հիւսիս-արևմուտք ընկած է մի ձորակ, որ ձգւելով և սղմելով գնում Ռէսի-Գոմերի մօտ վերջանում է մի կիրճով, որի բաւականին նեղ անցքից դուրս գալով՝ մի ճանապարհ տանում է դէպի Մօսուլ, ապա Բայազէտ:

Ահա այդ ձորակի մէջ ընկած է Զօրի պահականոցը, որտեղ լինում են 45-50-ի չափ զօրքեր: Բացի այդ, ձորակի երեք ճիւղերի միացման արձակ տեղում փռւած է քրդական փոքրիկ աշիւթի՝ ջէլալցիների մի օբան 60-ի չափ վրաններով: Այդ պահականոցի յարձակումը յանձնւած էր «Մասիս» արշաւախմբին: Խմբապետի ուղիղութիւնից չէր վրկալել կիրճի հսկողութեան կարեւորութիւնը, մանաւանդ այն դէպքում, երբ զօրքերին միանային նաև այդ վրանների մէջ ապրող քրդերը, որոնց կուռւում ընդունակ տղամարդկանց թիւը յամենայն դէպս 100-ից պակաս չէր լինի:

Յուլիսի 12-ի դեռ ևս աղջամուղջին՝ խմբի տասնեակները կարգով դիրքեր գրաւելով՝ կիրճի մուտքից սկսած մինչև վրանների թիկունքի ժեռուտները, սպասում էին խմբապետի նշանին, որը իր կողմից սպասում էր Մօսուլի վրայ յարձակւելու ըստէին: Այդ խմբից մի տասնեակ հսկում էր բարձունքների վրայ, թշնամուն թոյլ չտալու, համար գրաւել այդ դիրքերը:

Մօսուկի յարձակումը երկար սպասել չտուեց: Առաջին իսկ ռուսները արձագանք գտան ամենուրեք: Ջօրի պահականցի պահապանը սարսափեց այդ անսովոր պայթիւնի ձայնից և ռուսական զորացանը ոտի մէջ ուղղեց ու արձակեց: Անգիտակցօրէն արձակեցին նոյնպէս տասնեակներից մի երկուսը. այդ ձայների վրայ զօրքերը դուրս թռան զէնքը ձեռքերնին, այդտեղ վազեցին նոյնպէս քրդերը, որոնք միանալով զօրքերին՝ գրոհ տուցին դէպի կիրճի մուտքը: Յարմար ռուսներ պատրաստ էր բռնել նշան տուեց, և միաժամանակ ամէն կողմերից տեղացի գնդակների կարկուտը: Դիակները ճօճացին միմիանց վրայ, սարսափը տիրեց ձորակին, որի մէջ գլուխ կորցրած զօրքերը և քրդերը, այս և այն քարը, այս և այն թուփը վազվզելով, գլուխում էին հարկուրաւոր գնդակների տարափից: Թափուղ կրակը տեւեց մինչև առաւօտ. լոյսը բացւեց, յոխորտացող զօրքերի տեղ՝ դիակներ էին փռած այս ու այն տեղ:

Այդ կոտորածից համարեա թէ ազատուողներ չեղան, բացի մի քանիսից, որոնք Ռէսի-գոմեր սարի վրայ դիրք բռնած՝ հատ ու կտոր պայթիւններով իրենց գոյութիւնն էին ցոյց տալիս: Այդտեղ կային կանայք և երեխաներ, որոնք վրաններից դուրս գալով՝ քաշել էին հակառակ կողմի բլուրները. նրանց՝ հրամայած էր խնայել: Այստեղ սպանեց նաև իր քաջութեամբ անուն հանած էլքաշին իր տղայի հետ միասին:

Երկու ժամ տեղող կուից յետոյ՝ ձորակը լռեց և նրա մուտքն ու դիրքերը գրաւող տասնեակները քաշեցին, որից յետոյ սկսեց ծանր օրւայ յամառ ու երկարատև կռիւ:

Գ.

Առաւօտ էր արդէն, առաւօտ մեծ օրւայ մեծ կուի:

Մօսուկի փախստական ժողովուրդը առաջ առաջ բարձրանում էր դէպի Չնգլի դիրքերը՝ զբաղեցնելով մի երկու տասնեակ, որոնք գնդակների տակ առաջ էին քշում 500-ից աւելի կին ու երեխաներ:

Գիշերային յարձակումները և սոսկալի կոտորածը ոտի էին կանգնեցրել շրջակայ քրդական աշիրէթները և զօրքը: Տղաները շրջապատեցին միաժամանակ մի քանի կողմերից: Արշաւեցին քրդական աշիրէթները, որը ձիով, որը ոտով, որը զէնքով, որը անվէն: Արշաւեց զօրքը, ետեակ և հեծեալ հարկուրակներից կազմած: Նորից երեւացին քրդեր և բաշիրօզուկներ, դաշտի վրայ երեւաց երկու թնդանօթ, որոնք սակայն մի որոշ տարածութիւնից չկարողացան այլևս առաջ շարժել: Ռմբակոծութիւնը աննպատակ էր:

Մօսուկի առաջ տարածուող Պաշտը ծածկեց անօրէն խուժանով:

Գաղթող ժողովուրդին ուղեկցող մի երկու տասնեակ, ինչպէս և Ջօրի վրայ յարձակող տասնեակները սկսեցին բարձրանալ և փոքր առ փոքր դիրքեր գրաւել միւս կողմից անընդհատ կրակ տեղալով թշնամու վրայ, ամէն անգամ թափթփելով նրանցից բազմաթիւ դիակներ:

Այդ օրւայ կռիւները նշանաւոր են թշնամու ունեցած զոհերի քանակութեամբ և մեր տւած մի երկու զոհերի անպատմելի քաջութեամբ, հերոսական մահամբ:

Քրդական մի շէյխ, գլուխ անցած կատաղի ահագին մի խուժանի, փրփուրը բերանին, սալափաթ կանչելով և խրախուսանքներ կարգալով, յարձակում էր Վահանի, Բաբկէնի, Համօյի և Գարեգինի դիրքերի վրայ և նորից

յետ մղում կոտորածներ տալով: Վահանի և Բաբկէնի հարւածները աննպատակ չէին անցնում: Թշնամու շարքերից անընդհատ գլուխում էին դիակներ:

Բաբկէնի կուելու, սառնարիւնութեան, ճիշդ նպատակին արձակելու ընդունակութեան և մինչև վերջին շունչը յամառ կուելու տոկունութեան որպէս ապացոյց՝ ականատեսը պատմում է հետեւեալը:

Բաբկէնի եղած դիրքի վրայ իշխելու համար 12 հեծեալ քրդեր փորձեցին մի պոռոյ գործել և գրաւել մի բարձր դիրք, բայց քաջ Բաբկէնը մէկիկ-մէկիկ, ինչպէս ասում են, ցած բերեց ձիերից այդ գազան քրդերին, որոնցից ոչ մէկն էլ կենդանի չմնաց:

Թշնամու ուշադրութիւնը դարձաւ այդ կէտի վրայ: Դիրքի անյարմարութիւնը և պաշտպանողների փոքրաթիւ լինելը մի կողմից, կուղների յոգնածութիւնը և անընդհատ ու լարւած ուշադրութեամբ կուելը միւս կողմից և թշնամու անվերջ խուժումը այդ դիրքի վրայ երրորդ կողմից—ստեղծեցին օրհասական դրութիւն, բայց այդտեղ էլ չորս կտորիճներ — Բաբկէն, Վահան, Համօ և Գարեգին — կուում էին մի զարմանալի քաջութեամբ, գլորելով իրենց վրայ գրոհ տուող ահագին խուժանից բազմաթիւ դիակներ, մինչև որ իրենք ևս իրենց դիրքերում ծանր կուի մէջ ընկան հերոսական մահով: Չորս հերոսների նահատակման տեղում, շատերի ասելով, թշնամին թողեց աւելի քան 150 դիակներ,—այնտեղ թափւում էր հայդուկային կրակը միաժամանակ մի քանի դիրքերից:

Մի ոչ պակաս յամառ կուի տեղի ունէր այդ ռուսներին մի այլ դիրքում: Քրդերի մի բազմութիւն հիւսիսից և զօրքերի մի հարկուրեակ արեւմուտքից յարձակում ու մեծ կորուստներով յետ էին նահանջում մի դիրքից, որտեղից այդ յարձակման դիմագրում էին հինգ հայդուկներ՝ Սուրէնը, Հաջին, Սիմօն, Պետրոս և Մինաս: Վաւեր ծանր էր և անհաւասար: Դիրքի վրայ յարձակւում էին մի քանի ուղղութեամբ նոր կուող ուժերով: Դիակները գլորում էին անընդհատ, բայց յարձակումը չէր դադարում: Հինգ հոգու խումբը ստիպւած էր դիրքը թողնել քաջ Սուրէնը և ալեխառն Հաջին առիծի պէս դուրս թռան դիրքից, կրակ տեղալով և ընկան գնդակների տարափից: Մի վայրկեան ևս՝ և երեք կտորիճները կարողացան դիրքը պահել, թշնամու առաջին շարքից զարկելով մի քանիսը միանգամից: Այդ օրւայ թշնամու կորուստը 250-ից անց էր:

Արեւը թեքում էր, տղաները գրաւում էին բարձր դիրքեր, — թշնամին յետ էր նահանջում ամօթահար:

Հուշակաւոր Չնգլի բարձունքների վրայ շուտով նորից ծածանեց Դաշնակցութեան յաղթական գրօշը:

Դ.

Յուլիսեան արեւը թեքած դէպի հորիզոն իր բոլոր ջերմութեամբ դեռ ևս շարունակում էր այրել ջրից և բուսականութիւնից զուրկ Չնգլի ժեռուտ բարձունքները: Ամէն ինչ խաղաղ, օդի մէջ ոչ մի շարժում նկատելի չէր:

Ահա այդ բարձունքների մի թեք հարթութեան վրայ շունչ էր առնում ծծի երեխաներով և լացող մանուկներով ծանրաբեռնւած, տուն ու տեղ ձգած Մօսուկի և Քօրուկի գաղթող ժողովուրդը: Դառն ճակատագրից հալածւած կենդանի էակների այդ տեսարանը աւելի քան յուզիչ էր:

Ո՞ր էին դիմում նրանք: Մի՞թէ տարբեր սպանդանոցների մէջ մարդկային տանջանքը նոյնը չէր: Սպանդանոցը միևնոյն էր ամէն տեղ, սակայն վերահաս սարսափը քշում էր մէկից դէպի միւսը:

Շուտով յայտնեցին ապստամբները, մի օրւայ ծանր կուից յետոյ յոգնած ու գաղթած տասնեակները դանդաղ քաշում էին դէպի վերջին դիրքերը:

Նրանց հոգսը գաղթող ժողովուրդն էր, տեղադուրկ, բաց երկնքին ապաւինած այդ թշուառ ժողովուրդը, — հալածւած, տանջւած:

Նրանք սահմանի միւս կողմում ունէին հարազատներ, որոնց մօտ կարելի էր պատսպարան գտնել: Ահա այդ ծանր խնդրի լուծմամբ զբաղւած էր ֆէդային, երբ յանկարծ տեղացող գնդակների տարափից մի քանիսը վարկեցին: Մի՞թէ թշնամին պաշարեց և թակարդի մէջ ձգեց: Մի՞թէ թշնամին յանկարծակիի բերեց: Այս հարցը վայրկենապէս անցաւ բոլորի գլխով և աչ ու ձախ պայթեցին հրացանները:

«Տղա՛յր, սահմանից կը տեղան գնդակները, համբերե՛ք»: Այս ձայնի վրայ հայեացքները այն կողմը դարձան: Յիրաւի ուղւոսաց սահմանի վրայ նախ կանգնած էր ուսուսհայտակ քիւրդ Համիդ բէգը իր 200-ից աւելի հրացանաւորներով, իսկ նրանցից աւելի բարձր դիրքեր բռնած 300-ից աւելի պլաստուն կօզակներ և սահմանապահ զօրքեր կրակ էին տեղում:

Ճնշւածների համար արիւն թափող հայդուկի կըրծքում զայրոյթը սոսկում առաջացրեց:

Դաւաճանութիւն, ստոր դաւաճանութիւն:

Այնտեղ քրդի հետ միացած տաճիկ զօրքն էր հային կոտորում, իսկ այստեղ ուսուր:

Ուելը անմտութիւն էր: Որոշեց և բարձրացաւ խաղաղութեան դրօշը — միջազգային նշանը: Բայց ի զո՞ւր: Քրդի հետ միասին նրա դաշնակից ուսու գիւնդը արհամարեց զենքը վայր դնելու այդ նշանը և շարունակեց կրակ տեղալ: Այն ժամանակ, երբ ուսու կառավարութեան Պօլսի գեսպանը սուլթանին առաջադրում էր հայկական ռեֆորմների ծրագիրը, — ուսու գիւնդը քրդի հետ միացած՝ կրակ էր տեղում նոյն հալածւած հայի վրայ: Ո՞վ զազոնելի քաղաքական կեղծութիւն...

«Տղա՛յր, գատէ՛ք գաղթականներից և զենքերդ ուղղէ՛ք միմիայն քրդին — մեր դարաւոր թշնամուն, իսկ ուսուին մի դիպէ՛ք, առայժմ մենք կը բաւականանք Եւրօպայի առաջ դնելով նրա դաւաճանութեան, նենգաւոր քաղաքականութեան և մեր դէմ ուղղած դաւադիր զենքի այս սոսկալի, ամօթաբեր փաստը»:

Այս խօսքերի հետ խմբապետը առաջ անցաւ, նորից տեղաց հայդուկի կրակը, երկու կողմից ընկան դիակներ, մինչև մութը կոխեց սար ու ձոր:

Ուսու գիւնդի վրայ կրակ չէր թափուում, թէև նա շարունակում էր Համիդ բէգի թիկունքը պահել: Տաճիկ զօրքերի և զօրանոցների վրայ կատարեալ յաղթութիւն տարած ապստամբները ուսուների կրակի տակ կորցրին 12 հայդուկ, նոյնչափ կորուստ ունեցաւ Համիդ բէգը:

Հորիզոնի յետեից մեղմիկ կերպով իր շրջանն սկսող արծաթափայլ լուսինը, Չնգլի բարձունքների և ձորակների մէջ երևան հանեց շարժող սուեւրներ — դրանք ուսու կօզակներն էին, որոնք կողոպտում էին ընկած հայդուկների դիակները...

Գաղթական ժողովուրդը վերադարձած է իր տեղերը: Բայազէտի փաշան երաշխաւորել է, որ նոր յարձակումներ չպիտի տեղի ունենան:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿ. Դըրբ ԿԵՂՐ. ԿՕՄԻՏԷ

Ի Գ Դ Ի Ր Ի Բ Ո Ր Ե Ն Ի Ն

Վերապէս ընկաւ Բօգօսլափսկին և հասարակական խիղճը հանգստացաւ: — Բայց ո՞վ էր Բօգօսլափսկին և ինչո՞ւ ընկաւ: — Տասներկու տարուց աւելի Բօգօսլափսկին գաւառապետ էր Սուրմալուի գաւառում և մի ամբողջ գաւառ կառավարելու համար մարմնացրել էր իր մէջ կաշառակերութեան ամենամեծ չափը, խղճի կատարեալ քարացումը, բարբերի ապականութիւնը, խելքի բացարձակ բացակայութիւնը, բռնակալութեան, ճնշումների և ժողովուրդին հարստահարելու ամենագաղանային, վայրենի հակումներ — նրա գործած բռնութիւնները և գաղանութիւնները այնքան շատ են, որ հաշւել չի լինի: Առանց դատարանական վճռի, Բօգօսլափսկու կամայական դրամական տուգանքներին ենթարկել է ամէն մի իգգիրցի:

Սուրմալուի սահմանները փակել ու ճանապարհները կապել կամայականօրէն և երթևեկութիւնը օրերով դադարեցնել, դա սովորական բան է եղել Բօգօսլափսկու համար: Գործով գնացած մարդկանց արգելում էր Իգգիրում մնալ:

Տանուտէրներ և ջրպետներ ընտրելիս՝ սպառնալիքների ու ծեծի սարսափի տակ իր ցանկացած մարդիկ ընտրել տալը՝ նոյնիսկ լրագրութեան նիւթ է դարձել:

Հրապարակով հայհոյանքի, անպատուութեան ու ծեծի է ենթարկել իւրաքանչիւր, նոյնիսկ «պատուաւոր» իգգիրցի, շնչին բաների համար: Նա պահում էր լրտեսների մի բանակ, ստոր արարածների մի խումբ, խայտառակութեան մի գործիք (Բալա բէգ), և հարիւրաւոր ստրաժնիկներ, որոնք իրենց կարգին մի-մի Բօգօսլափսկիներ էին:

Անտեղի կերպով նա աքսորել տեց Սուրմալուից բազմաթիւ մարդիկ, որոնց երկար ցուցակից կը բերենք մի քանիսը միայն:

Ջիլֆիղոտցի Խալֆա Կուլի բէգ, թիւրք Եաղուբը, Մարտիրոս Կանայեանց, Յակովբ Կանայեանց, Գրիգոր Տէր Թովմասեանց, Տաշուռուռնցի Մարգարը և շատ շատերը, — այն էլ խաբէբայութեամբ, հասարակական կեղծ վճիռներով:

Նրա գաղանութիւնը արտայայտուում էր առանձնապէս ծեծի մէջ, որ տեւել է դժբախտացածների մի շարք:

Այդ շարքից մեզ յայտնի են՝ Գէորգ Մուխսի Բաղդասարեան, որը խլացաւ ընդ միշտ, կառապան Պօղոս Խանամիրեան, որը կառքը ուշ տալու համար սոսկալի ծեծի տակ կորցրեց լսելու ընդունակութիւնը և Իգգիրից գաղթեց: Բայազէի Աւետիսի 8-10 տարեկան տղան ենթարկելով այդ գաղանի բռնուցքին՝ վախից հիւանդացաւ և ստացաւ բարակացաւ: Ատամներ փշոյլու և գլուխ ջարդելու դէպքեր անթիւ են: Գաւառի միւս գիւղերում մարդկանց՝ եզների փոխարէն լծում էր և վարում արտը:

Այժմ լսէք աւելի սոսկալի՝ ծեծից մահացածների ցուցակը: 1894 թ. Երևանի նահանգապետ Ֆրէզէն Իգգիր գնաց Բօգօսլափսկու վրայ եղած բողոքները

քննելու: — Բագուլափսկին երկար կանգ չառաւ, նոյն գիշեր Իգգիւրի տանուտէր Եզնակի միջոցով քանդել տեց ռուսաց դեռ նոր սկսած եկեղեցու հիմքը, այդ գործը ձգեց հայերի վրայ, բանտարկել տեց վեց անձը հայեր, որոնցից երկուսը, Վահրամ Արահամեան և Ադամ Կանայան սոսկալի ծեծից հիւանդացան և մեռան: Հէնց այդ ժամանակ էլ Փրէզէն թարեկամացաւ Բագուլափսկու կնոջ հետ և այդ օրից դարձաւ այդ գաղանի թէ ու թիկունքը...

Այդպիսի մի «շառ» ևս նա սարքեց 1901 թուականին, գիշերով մարդիկ ուղարկելով զօրքերի միջնաբերդի վրայ (ցէյխհաուզ), և այդ վերագրելով հայերին՝ անտեղի բանտարկութիւններ կատարեց:

1898 թին մեռաւ ծեծի տակ Ալի Ղամադլու գիւղացի Թադէոսը: Դրանից մի տարի ուշ, նոյնպէս ծեծի տակ մեռաւ Բլուրի տանուտէրը:

1903 թին մեծ աղմուկ հանեց ալիջանցի տանուտէր Սերոր Իսայանցի մահը. առողջ մարդը Իգգիւրից վերագարձաւ Զարդ ու փշուր, մարմնի կապուտակներով, բեխերը փետած և մի օրից յետոյ մեռաւ: Տաս օրից յետոյ կատարած քննութիւնը ոչինչ չ'ապացուցեց, ինչպէս ամէն անգամ: Սարսափի տակ՝ նոյնիսկ մեռածի եղբայրները հրաժարեցին վկայութիւն տալուց:

Այս գարնան, երբ Բագուլափսկուն դեռ ևս չէր յաջողւել կալւածական խնդրի և ցոյցերում ընկածների ու արտուրւածների կսկիծը հանել տալ Սուրմալուի հայ ժողովրդի սրտից, ծրագրեց և պատրաստեց մի խուզում-թիւն հայերի և թիւրքերի միջև: Զրպետի ընտրութիւնը լաւ առիթ էր: Նախօրը նահանգապետից խնդրեց թոյլ տալ Իգգիւրում եղած կոզակներին իր տրամադրութեան տակ առնել, որոնց ցրելով Իգգիւրի փողոցները՝ հրաման տեց պատահած հային խփել, ծեծել. բայց կոզակների գլխաւորը արգելեց այդ, հայերը և թիւրքերը իմացան այդ բանը և միջոցներ ձեռք առան առիթ չստեղծելու: Բագուլափսկու սարքած մի հայի և թիւրքի կռիւն ընդհանուր կռիւ չփոխեց և այդ կերպ Իգգիւրի վճարից անցաւ դիւային մի ծրագիր:

Այսպիսի փաստերի շարքում՝ աւելորդ ենք համարում առաջ բերել այն տուն ու տեղի տէր մարդկանց ցուցակը, որոնք Իգգիւրի սահմաններից դադարկուն են ընկել Բագուլափսկու ձեռքից:

Այդ գաղանը միայն հայտնաց չէր, այլ և մարդատեաց, բառի բուն նշանակութեամբ, թէ և հայերը աւելի էին նրան զրգուում: Նա հայհոյում էր նոյնիսկ կրօնները և կրօնական սրբութիւնները: Նա չէր քաշոււմ նոյնիսկ իրեն հրապարակով Իգգիւրի Ասուած անւանելուց:

Ահա թէ ինչու նա կրում էր զանազան մականուններ: Թիւրքերը նրան անւանում էին «ջանաւար», այսինքն վայրենի մի գաղան: Ռուսները «գանտիստ»՝ անունն էին տալիս, որ փոխաբերական մտքով ատամ փշրող կը նշանակէ: Իսկ հայերի կողմից նա ժառանգեց «բորենի-մարդագէտ» անունը:

Եւ իսկապէս նա մի մարդակեր էր, մի գաղան, մի հրէշ, որի նմանը աշխարհ չ'ընկելու համար հարկաւոր էր լինել Պլէվէ, Գօլիցին, Փրէզէ և նրանց ստեղծած ռէժիմը:

Այս բոլորը քաջ յայտնի էր Կովկասի վարչութեան: Իգգիւրցի տանտերկու երկար տարիների ընթացքում իսկական և անստորագիր բողոքներով հեղեղեց ոչ միայն

այդ վարչութեան դիւանատները, այլ և մինիստրական կարիներները, բայց անօգուտ, — այդ գաղանը համարւում էր ռուս կառավարութեան այժմեան ռէժիմի անհրաժեշտութիւնը:

Բայց մի ամբողջ գաւառի հարիւր հազար ժողովրդի ինքնասիրութիւնը, մարդկային արժանապատեւութիւնը այդպիսի անարդարութիւն տանել չկարողացաւ. նրա մէջ գլուխ բարձրացրեց բողոքի ձայնը, ազադակող խիղճը, բուն ցասումը և այդ ընդհանուր զայրոյթը արձակեց մի վճիռ, իսկ վճիռը իրագործեց մի անհատ, որի մէջ կուտակւած էր այդ զայրոյթի ամենամեծ չափը:

Բորենին ընկաւ՝ ճակատից ընդունելով գնդակի հարւածը, և հասարակական խիղճը հանգստացաւ:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Խ Ո Ր Բ Ե Ր Գ Ի Ն Ե Ր Ջ Ա Ն Ի

Խարբերդ, 8/21 մայիս

Կը կարծենք թէ, պէտք եղածը չի գրեցաւ ասկէ՝ ամսներ առաջ վերջացող այն քաղաքական խնդրոյն նկատմամբ, որ այս գաւառին համար նշանակելի դէպք մը եղաւ, անգամ մըն ալ հաստատելով համիդական վարչութեան զգուշ շնականութիւնն ու անխիղճ հարստահարութիւնը: Երկիր մըն է ասիկայ, ուրկէ, աւաղ, լուած ձայները միևնոյն ողբը կուտան, միևնոյն ցաւի գանգատը կ'ընեն, ու միշտ արցունք, միշտ հեծեծանք, միշտ տրոց: Թղթակիցը, որ գրիչը ձեռք կ'առնէ գրելու, ամէն անգամ ակամայ կ'անդադարանայ, թէ իր ըսածներն ու ըսելիքները միշտ իրարու կը նմանին. ինչ որ երէկ էր, նոյնն է այսօր և անկասկած նոյնը պիտի ըլլայ նաև վաղը: Աւելորդ կրկնութիւն մը չէ՞ միթէ ասիկայ, որ ձանձրոյթ մը կը պատճառէ օտարներու, բայց ինչ ընես. ցաւը կայ ու իր սաստկութիւնը աղաղակել կուտայ. հոգ չէ, թէ այդ աղաղակը մարդկութեան գթութեան ականջին հասնի թէ ոչ:

Բուն խնդրոյն անցնելէ առաջ՝ կարեւոր կը նկատենք կարգ մը բացատրական նախադասութիւններ, զայն աւելի հասկնալի դարձնելու համար:

Խարբերդի նախորդ կուսակալն էր Բեուֆ պէյ, որ ասկէ մօտաւորապէս 8-9 ամիս առաջ պաշտօնանկ եղաւ: Ասիկայ մարդ մըն է, որ անձնապէս բարի ու անկաշառի համբաւը ձգեց հոս իր վեց եօթը տարւան պաշտօնավարութեան տեղողութեանը միջոցին: Լուրջ էր, բայց շատ երկչոտ, որ ուրիշ չարիք մը կրնայ սեպելի քանի որ երբեք ազդու վարչութեան մը չկրցաւ գործադրողն ըլլալ և ասիկայ խոստովանելի թերութիւն մըն է կուսակալի մը, որ այսպիսի երկրի մը մէջ, ուր ղադրի պարտեզը՝ կը ծաղկի, ուր ոճրագործութիւն, հարստահարութիւն, բռնութիւն, ցեղային ատելութիւն՝ բարոյագուրկ ու վատթարացած ընկերութեան մը յատկանիշ եղեր են: Արուամուլ էր, բայց խնդիր չէ ասիկայ, քանի որ հոս երբեք աչքառու թերութիւն մը չ'ընկաւոր թիւրքերու կողմէ: Արդ, ըսենք թէ Բեուֆ փաշայի պէմ հակառակ կուսակցութիւն մը կար հոս, տեղացի թիւրք հասարակութեան կարգ մը մարդոց և կարգ մը պաշտօնեաներու կողմէն բաղկացած, ո՛չ թէ անոր համար,

որ Բէռլին փաշային մէջ արուագէտ, թոյլ կամ անվարձագէտ մարդ մը կը տեսնէին, այլ լոկ անոր համար, որ կաշտակեր չէր և հետեաքար բաղձացող չէր հայուն հարստահարութեան կամ ուրիշ անունով քաղաքական խնդիրն երևու, ուր շահագործութեան արգասաբեր ու անսպառ դաշտ մը կար թիւրք պաշտօնէուն թեան մեծամասնութեան համար: Սակայն կուսակալ մը ինչով կարելի էր հեռացնել իր պաշտօնէն՝ երբ այսօր կեդրոնը, կամ որ նոյնն է խալիֆան, քիչ նկատողութեան կ'առնէ հասարակութեան գանգատը կամ բողոքը, իր երկրին բոլոր մեքենան կը լարէ իրեն յատուկ ու լոկ իրեն գաղտնի զսպանակով մը: Աստի ամէն պարագայի տակ պէտք էր ստեղծել քաղաքական խնդիր մը, որ անվրէպ և միակ միջոցն է ամէն նպատակի իրագործման: Բէռլին փաշայի հրաժարեցման խնդիրէն ետք, կար նաև ուրիշ գլխաւոր պատճառ մըն ալ, որ թխսեց այնքան դժբախտութիւններ:

Վարդի օրերուն, իրաւ է թէ Խարբերդ համեմատաբար քիչ թւով անձի կորուստ ունեցաւ, անոր համար աչքի երևցող հայ կարեւոր անհատներ թիւրք խուժանին կողմէ գէշ կերպով կը դիտէին, հետեաքար պէտք էր կամ նոր ջարդ մը սարքել և կամ այդ աչքի զարնող հայերը կերպով մը ոչնչացնել: Այս նպատակին համար ալ տեղական յուզում մը յառաջ բերել պէտք էր, բան մը, որ դիւրին է ինքնին, նկատի ունենալով ջարդի աւերման ու կողոպուտի վարժած անսանձ հասարակութեան մը սպառնալից տրամադրութիւնները:

Եւ ահա հերու, ճիշդ այս օրերուն, յանկարծ լուր մը կը տարածուի թէ, Խարբերդի մէջ—հին քաղաքը, որ ժամ մը միայն հեռու է Մէզիլէ կուսակալանիստ կեդրոնէն—Յարութիւն Սէմէրճեան անունով համեմատաբար հայ երիտասարդի մը տունը խուզարկած և ինքն ալ ձերբակալած է: Այս երիտասարդը՝ դէպի Ամերիկա գաղտնի ձամբորդներ փախցնող ջորեպաններու միջնորդն էր, այսինքն իր կողմէն գիւղերէն ու քաղաքներէն դէպի Ամերիկա փախցնողներ հաւաքելով կը յանձնէր իրեն ընկերակից ջորեպաններու: 2ի մոռնանք հոս աւելցնելու թէ, Խարբերդ այն միակ գաւառն է, որ ամենէն շատ պանդուխտ ունի Ամերիկա, թւով մօտաւորապէս 12-15,000, ամենքն ալ ընտանիքի հայր, կամ զաւակներ, որ հոս մայր ունին, հայր ունին, քոյր ու եղբայրներ ունին, մէկ խօսքով՝ ընտանիք մը: Արդ տասնեակ տարիներէն աւելի է որ կառավարութիւնը խստօրէն արգիլած է դէպի Ամերիկա պանդխտացումը, նախ անոր համար որ արդիւնաբերօրէն, երկրագործ ու աշխատող հայ տարրը կը նւագի, երկրորդ՝ անոր համար, որ հայը ազատ երկրի մը մէջ տեսնելով արդարութեան, իրաւունքի ու ազատութեան փրկագործ բարիքները՝ աւելի գիտակցօրէն կը զինւի բռնակալութեան դէմ, լայնօրէն վերահասու կ'ըլլայ իր թշուառութեան և կը դառնայ աւելի վտանգաւոր: Երկիրը չ'ապրիցներ, առեւտուրը ամբողջովին դադարած է ու արհեստներն ալ հոգեվարք, երբ անդին բռնութիւնն ալ նոյն չափով կ'աճի ու արմատ կը բռնէ: Ինչ ընել պէտք է: Ամէն զոհողութեամբ հեռանալ, միայն հեռանալ և ահա հոսանք մըն է որ ծայր տեւր կ'երթայ, դէպի ո՛ւր, միշտ դէպի Ամերիկա: Ընտանիքի հայր կայ որ տասը տարիներէ աւելի է իր կնոջ, իր զաւակներուն երեսը տեսած չէ. հարս կայ որ իր երկանը հետ հազիւ քանի մը ամիս կամ տարի մը կենցաղելէ ետք՝ հոս իր գեղան տանը մէջ

իզո՛ւր կը սպասէ սիրելիին. ո՛չ գացողը իրաւունք ունի դառնալու, ո՛չ մնացողը՝ երթալ իր սիրելիին միանալու: Աստի գիւրին է հասկնալ թէ ճամբորդի փախըստականութիւնը բանուկ առեւտուր մը դարձած է այս ու այն ջորեպանին ձեռքը, որոնք մէկ կարաւանով 15-20 հոգի կը փախցնեն լեռնային գաղտնի ու դժարանցանքի ուղիներէ կամ նաւահանգիստներէ, մէկ անգամէն 100-200 ոսկի շահ մը գրպանելով:

Դառնանք բուն խնդրոյն: Յարութիւն Սէմէրճեանի ձերբակալութենէն հազիւ երկու-երեք օր անցած էր, որու միջոցին երիտասարդին նկատմամբ տանջանքներու սոսկալի լուրեր տարածանութիւն գտան — յանկարծ լսեցաւ թէ՝ Յարութիւնը Խարբերդի կառավարական շէնքին պատուհանէն վար նետեր են. թէ ինչո՞ւ, մարդ չի գիտեր. միայն՝ երիտասարդը ողջ, բայց խեղանդամ մնացեր է, ջախջախած ըլլալով սրունքներն ու գլուխը, և մահամեծ վիճակի մէջ կը գտնուի: Քանի մը օր ալ անցաւ և ահա կատաղի խուզարկութիւններու և ձերբակալութեանց շարք մը սկսաւ որ տեւեց երկու ամսէն աւելի:

Այս միջոցներուն կուսակալ Բէռլին փաշան քննական պոստի ելած էր, ինչպէս սովորութիւն է՝ տարին կամ մէկ-երկու տարին անգամ մը, անոր այդ բացակայութենէն օգտուելով՝ պետական լրտեսներու, շահախնդիւր և ուրիշին թշուառութեան մէջ իրենց բարձրացումն ու դիրքին ապահովութիւնը փնտռողներու վոհմակը՝ յատուկ սադրանքի ծրագիր մը պատրաստած էր և ահա կը գործադրուէր: Համբեք ասոնց անունները.

Մէքթուպճի.—Պետական լրտես ստորնկարագրով՝ Փօլիս Մուշէթ թիշի Մուստաֆա.—որ ուղղակի լրտեսի պաշտօնով ղրկւած է Վ. Պոլսէն լիաթոշակ ամսականով, անխիղճ վատութեամբ և ստոր գործերով յառաջացած:

Դատական քննիչ Համմտի պէյ.—կաշառակեր, սինլքոր արարած մը, տղէտ ու վտանգաւոր այնչափ՝ որչափ կարելի է երեւակայել մեծամարմին և չարաշուք դիմագծով մարդուկ մը:

Խարբերդի գատին՝ Փէյզիւլու համան.—կովկասցի թլւատ լիզուով թրքախօս թաթար մը, տգէտ, յիմար և ցած հոգի:

Խարբերդի Մալմիւտիւրին.—կաշառակեր, արիւնարբու և նենգամիտ, որ Արաբկերի ջարդերուն՝ աննկարագրելի չարիքներով դիրք ու դրամ շահած է:

Մէզիլէի Ա. Գօմիսէր Մուխլիս.—Տգէտ, երկչոտ, բայց կաշառակեր, ուղտապահի գանկով ու երեւոյթով ապուշ մը:

Խարբերդի Գրդ Գօմիսէր Համմտի.—Բող մօր մը զաւակ, էֆէնտիներու արուագիտական ախտին ծառայած իր պատանեկութեանը ու այդ միջոցով բարձրացած, միւսնոյն ատեն պզտիկ մարդու ալ մեծ փառասիրութեամբ տկուած:

Ասոնք բնմիջ վրայ գործող զերասաններն եղան, որոնց ամենէն գործուն ու խիզախը վերջինն եղաւ, բայց գեռ իրենց ետին կային Խարբերդի սօփտաները, կրօնամուլ ու հարստահարիչ թիւրք մեծատունները և կարգ մը երկրորդական պաշտօնեաներ ալ, որոնց անունը հոս տալն անգամ իրենց պատիւ մը պիտի ըլլար:

Ինչպէս ըսինք խուզարկութիւնները յամառօրէն և

սարսափահար կերպով շարունակեցան երկու ամիսէն աւելի թէ խորհրդի և թէ Մէջերէի մէջ. սպիտակ տէնօրը կը տիրէր: Հայերը գունատ, գլխիկոր և յուսահատ կը սպասեն անստոյգ բանի մը, սպառնալիքի մը, իւրաքանչիւրը իր կարգին զժախտութեան մը անահնկալութիւն ունի, մանաւանդ որ ձերբակալածները ամէնքն ալ փոխադրւած են խորհրդի կառավարական շէնքը, ուր կը լսուի թէ գիշերները անլուր տանջանքներ, խոշտանգումներ կը կատարուին: Ոչ մէկ հայ յանգստութիւնը ունի կառավարական շէնքին մօտենալու կամ նոյն իսկ գէպի վեր՝ պատուհանները նայելու. մէկ քանինքն այդպիսով կ'սկսածելի նկատեցան ու բանտարկեցան քանի մը օր: Գործ, առուտուր դադարեցան. նոր ջարդի մը երկիւղը սկսաւ տիրական դառնալ:

Բէռլին փաշան իմանալով Արաբկերէն՝ հոս անցած դարձածը, ճամբայ կ'ելլէ պաշտօնավայրը փութալու, բայց կէս ճամբուն կ'աթլած կ'ունենայ: Բժիշկներ կը վազեն իր քով և հիւանդը կը փոխադրեն իր տունը, ուր փակւած կը մնայ, մէկ կողմէն հիւանդութեան, միւս կողմէն իր անել զիճակին պատճառով՝ անկարողութեան մատնւած, լաւ հասկցած ըլլալով թէ խաղցած խաղը իր գլխուն վրայ կը դառնայ:

Խուզարկութիւնները սկսելէն ամիս մը ետքն է որ նոր դէպք մըն ալ կուգայ՝ խնդիրը աւելի ծանրացնելու շեշտելու: Խորհրդի հիւսիսային արեւմտեան կողմը՝ Եփրատի եզերքը գտնուող Աշուան գիւղին մէջ կրկնակ ոճրագործութիւն մը կը պատահի ցորենին, սպաննելով ոստիկան մը և կէմիճի Իսմայիլ աղա ըսւած քիւրդ պէկ մը: Այս երկու սպաննութիւններն ալ կը վերագրուին Յարութիւն Սէմէրճեանի երկու ջորեպան հայ ընկերակիցներուն, որոնք Յարութիւնի ձերբակալումը, կրած տանջանքները և իրենց փնտուիլը ըսելով փախած անյայտ եղեր էին: Բայց ոճրագործութեան վայրին վրայ չձերբակալեցան ասոնք, 10-15 օր ետքը միայն ձեռք անցան Մէջերէէն կէս ժամու հեռաւորութեամբ Սիւր-աիւրի գիւղին մէջ:

Բէռլին փաշան դեռ իր հիւանդութիւնը չապաքինած՝ իր պաշտօնանկութեան հեռագիրը ստացաւ: Տոափն առաջին արարւածը խիստ յաջող վերջացաւ: Եւ ինչո՞ւ չէ, քանի որ այստեղէն օրը օրին լրտեսներու և ոստիկանութեան կողմէ Պօլիս տրւած հեռագիրները՝ խնդիրը իրենց ուզած գոյներովը ու համեմատութեամբ ներկայացուցած էին, տեղեկագրելով թէ խռովարարական մեծ խուժրի մը գոյութիւնը երևան հանած էին՝ 400 մարդին հրացաններով, վտանգաւոր թուղթերով և սպանազինութեամբ:

(Կը շարունակուի)

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԼՈՒԹՅՈՒՆ

13. Օգոստոս

Ձեզ արդէն յայտնի կը լինեն Բագրեւանդի փայլուն կռիւների մանրամասնութիւնները: Յաջողութիւնը աւելի եղաւ, քան սպասուած էինք: Ռուսների գլխաւորը համուած էր մինչև Ռուսաստանի սահմանակից գիւղերը: Շատերը լեռներն էին բարձրացել՝ յոյս ունենալով գոնէ հեռւից դիտել զինուորների ու քրդերի ջարդը:

Իրիկան մօտ, սակայն, ուստի պահապան զինուորները

միացած Համիդ քիւրդ բէկի 200-ի չափ ձիաւորների հետ՝ հրացանների ձայնով գտնուած են տղաների հետքերը և յանկարծակի վրայ տալիս:

Տղաները, իրենց ամբողջ ուշադրութիւնը տաճկաց կողմը դարձրած լինելով և բոլորովին չկասկածելով, թէ ռուսական սահմանի կողմից կարող է որեւէ յարձակում տեղի ունենալ, մեծ կորուստ են ունենում: Մինչդեռ ամբողջ օրուայ ընթացքում մերոնցից ընկել էին ընդամենը 8 հոգի, այդտեղ սպանուած են 19 և գերի ընկնում 33 ընկերներ: Վարդանուած են ազատւել միայն 42 հոգի:

Չնայած, որ ռուս զինուորներին ոչ մի դիմագրութիւն չէ լինում, նրանց կողմը ոչ մի գնդակ չէ արձակուած, չնայած դրան՝ գերիների հետ վարուած են ամարդի կերպով, կարծես ռուս իշխանութիւնը ամեն ճիգ թափում է մոռացնել տալու տաճկական առասպելական զնգանները:

Մի նոր, աւելի բարբարոս կարգադրութիւն տեղի ունեցաւ Պետերբուրգ քաղաք հայակեր Պօլիցինի յաջորդ՝ Ֆրեյդէի կողմից. սա հրահանգել է, որ սահմանի մօտերը պատահած ամեն մի զինւած հայ գնդակահար անեն, առանց քննելու, թէ ինչ մարդ է: Ցանկանք, այդ երկրորդ տխրահռչակ կովկասեան կառավարիչը մինչև ուր պիտի հասցնէ իր թաթարական գազանութիւնները:

Յուլիս 10-ին գիշերուայ ժամը 12-ին, տէնօրի են թարկեց Իգգիբի գաւառապետ յայտնի Բօգոսլաւսիին: Մահը վայրկեանական էր Ցէնօրիստները ազատ են: Բայց նրանց փոխարէն բանտարկեցին անմեղ մարդիկ: Այսպէս էր և Էջմիածնի գաւառապետ Հմէլքիւնի սպանութեան փորձիցետոյ: Կառավարութիւնը իսկական տէնօրիստներին ձեռք ձգել չկարողանալով, բանտարկեց և զինուորական դատի ենթարկեց բոլորովին անմեղ մարդկանց: Բայց այս անգամ անմեղների բանտարկութեամբ չգոհացան. Ֆրեյդէն իր սիրուհիի ամուսնուն մահան վրէժը ուրիշ կերպով լուծեց. նրա հրամանով Իգգիբի ենթարկեց է կ զ է կ ու զ ի ա յ ի. լցնել տեղը այդ գիւղը 200 կօզակներով, որոնց ժողովուրդը պիտի պահէ իր հաշով և որոնց ամեն մի քմահաճոյքը պիտի կատարէ խոնարհութեամբ:

Խստութիւնները աճում են. բայց դրա հետ միասին սարսափն էլ աճում է պաշտօնանկների սրտերում, դրա հետ միասին հայն էլ բարձրանում է հոգեպէս:

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԵՆ

Համիդիէներ Ալաշկերտի գաւառում. — Ի նպաստ տաճիկ զինուորների եղած հանգանակութիւններ. — Թրքական նոր տրամադրութիւն. — Նոր տուրքերի հաւաքման կարիք. — Համիդիէի զինումը.

Մի քանի ամիս էր, որ համիդիէները 50-60 հոգով, նստած խեղճ հայ ժողովրդի տան ու տեղաց վրայ, ուտում էին, աւրում, գողանում, տանջում, հալածում և բռնաբարում: Անվերջ բողբոջները ոչինչ չ'արին, մնացին անլսելի, մի հանգամանք, որ աւելի էր գրգռում այդ վայրենիներին: Եւ ժողովուրդը՝ յուսահատ, ճարը կտրած, տալիս էր համիդիէի հացը, կրակ ու ճրագ, տալիս էր յարմարութիւններ, ձիերին ուտեստ և ակամայ լուծւում ու խոնարհւում էր նրանց ամէն մի լրբութիւնների առջև: Այդպէս տեղը մինչև ձմեռը վրայ հասաւ, փակեց սար

ու քար, ճար ու ճամբէն: Այդ ժամանակ եկաւ տաճիկ պաշտօնեան, քննեց, դիտեց և թող տեց, որ զինամիտ լինեն այդ վարենները, ասելով՝ «այժմ այլևս չեն կարող գալ հայ ֆէդայիները, պէտք է ցրել մինչև գետինը կը բացուի»:

Անցած դեկտեմբերի վերջերին կառավարչական կենտրոններում՝ Գարաբիլիսէում, Տիատինում, Բայազետում, կառավարութիւնը մերկացնում է պահապան համադրիչներին և առնում նրանց զէնքերն ու հանդերձները: Այդ տիմարները երբեք չէին երազում, որ այդպիսի օր է սպասում իրենց. կրկին գնով վճարեցին փճացրած փամփուշտների արժէքը, խնդրեցին, որ գէթ մի վերարկու մնայ իրենց, իբրև ձմեռայ պատսպարելիք, բայց ի զուրու եւ հեռացան մերկ, փոշեման, հայհոյանքով ու ծտելութեամբ:

Սոված կառավարութիւնը իր ուժերը լարում է գլուխը պահելու համար: Անվերջ տուրքերը, կաշառքները, կողոպուտն ու թալանը հերիք չեն նրա կարիքները հոգալու, հերիք չեն նրա կոկորդը լեցնելու, և այսօր նա նոր միջոցներ և հնարքներ է ստեղծել — դիմումն անել կանանց, որ նրանք էլ օգնեն: Փատիշահի զինւորներին ուստեստ թէ հանդերձեղէն է հարկաւոր, որ ոյժ ունենան «սուրբ հաւատը պաշտպանելու»: Եւ այդ նպատակով հրաւեր է ուղարկւած բոլոր խանդամներին ու խաթուններին, որ չխնայեն իրենց արգ ու զարգը «այդ արդար նահատակների համար»: Հրամանատարի կինը ուղարկում է իր ստորագրեալին, նա էլ երկրորդին ու այսպէս բարձրագոյն դռնից սկսած եկել ու հասել է վերջին անկիւնը, մինչև քիւրդ խաթունի դուռը, որ շտապում է մաս հանել իր շապկից, գուլպայից, վերարկուից և եթէ կայ՝ դրամից: Իսլամի կինը նւէրներ է տալիս և այն ամենայն ջերմեանգութեամբ: Եթէ շուտով այդ սրբազան նւէրներ չհրախրագրեն ու տոմսերը այցելին նաև հայ էֆէնտիների ու աղաների տները, վայրագիսի օրերին...

Պատմութիւնն էլ իր գործն է շարունակում, և կատարում են զարմանալի բաներ: Քիւրդն էլ է պատրաստում իր գլխի ճարը տեսնելու, նա էլ հետևում է պատմութեան դասին: Եւ այժմ նրանց մէջ աղա թէ հասարակ դասակարգ, ասում ու խօսում են. «Տեսնե՞ք հայի վերջը ինչ կը լինի: Այն ժամանակ մենք էլ կըսկսենք նրանց նման շարժւել»: Թիւրքն էլ այն համոզմունքին է դալիս, որ ամէն ինչ փոխում է:

Կարմիր սուլթանը «բարեհաճել» է ներել ծրագրած նոր տուրքերի գանձումը, որ 5 շուրուշից մինչև 700 շուրուշ լինելու էր. դրա փոխարէն իր ամենահաւատարիմ և հպատակ ժողովուրդին յայտնում է, որ հէնց այժմանից վճարեն գալիք տարւայ տուրքերի մի բաժինը: Կարիքը խիստ մեծ է և զգալի Սուլթանի հշու պաշտօնեաները տուրք հաւաքելուց՝ շունչ անգամ չեն կարող առնել. առնում են և ժողովուրդին էլ տալիս է, կաշառքն էլ հետը: Այժմեանից ստիպւած է վճարել ոչխարի գըլ-խահարկը, որպէս նոր տարւայ կանխավճար: «Թող ժողովուրդը ժամանակից մի քիչ շուտ վճարէ, թող մի քիչ էլ օգնէ դալվաթին (պետութեան) — ինչ կը լինի», ասում է թիւրք պաշտօնեան: Եւ այսպէս օրից օր ժողովուրդը ընկճում է նիւթապէս և նրա ապրելու միջոցը անցնում է կառավարութեան ձեռքը...

Տիւրք լուրերը արագութեամբ տարածւում են: Նախապատրաստութիւններ են տեսնւում շուտով զէնքի կանչելու

12 ալայի (վաշտ) համադրիչներին. ո՞ր պիտի գնան, յայտնի չէ. բոլոր աշիրէթների մէջ սկսել է դող: Նրանք ասում են. «Ո՞ր ենք գնալու, չգիտենք, արդեօք Մուկե-դօնիա, Բուսեյիա, Արաբիա թէ՞ Սասուն: Երեք տեղն էլ գնալ կը լինի, վերադառնալ չի լինի, վտանգաւոր է, ի՞նչ անենք, մե՞նք էլ թողնենք մեր ամէն մի բան ու հետևենք ֆէդայուն: Տաճկի միտքն է մեզ կոտորել տալ. եկող գարունը ուրիշ գարուն է, վայ մեր օրերին»: Ատելութիւնը օրէցօր մտնում է քրդական բոլոր խաւերը: Ինչպէս ասում են, մի քանի ցեղապետներ ուզում են մոռանալ անձնական թշնամութիւնները և միանալ իրար հետ, բայց, ո՞վ գիտէ, վայրենիների մէջ այնքան էլ շուտ չի մտնում ներումի և հաշտութեան գաղափարը:

Յայտնի Հիւսէյն փաշան պատրաստւում է յառաջանալ դէպի Բայազէդի շրջանը, աշխատում է ձեռք ձգել նոր նոր կալածներ և տէր դառնալ այդ տեղերին էլ. հակառակ նրա ձգտումներին, աղամանցի ցեղապետները աշխատում են ամէն միջոցներով արգելք դառնալ նրա յառաջխաղացման: Հետևանքը վատ պիտի լինի. ասում են, կարող է բացւել քրդական կուռի մի նոր դուռ:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Վ. Ս. Ն., 20 յունւար

Լրտեսների և վարձկան լրբերի թիւը զգալի կերպով աճել է քաղաքի մէջ: Դաւաճանութեան ու մատնութեան առաքեալները իրենց շուրջն են հաւաքել բաւական մեծ բազմութիւն: Այդ դաւաճանների մասին անցեալ տարիներում գրւած է այստեղից. դրանք մի բանի հոգի են. 1) Սէմէրճեան Յովհաննէս՝ նախկին անգամ կոմիտէի, այժմ անգամ գաղտնի ոստիկանութեան, 2) Բարբարաշեան Յակոբ՝ նախկին անգամ կոմիտէի, այժմ անգամ գաղտնի ոստիկանութեան, 3) Ջանջիլղաւեան Գալուստ, դա մի նորահարս երիտասարդ է, որ գարշելի ստորութեամբ, իր ընկեր Միհրան Թարկուլեանի հետ, մատնեց վարդգէսին: Կան և մի քանի կոմիտէներ ու փոխներ, որոնք կազմել են, երկու սեռից, մի խումբ՝ լրտեսութեան ու մատնութեան: Մի՛ զարմանաք, հայ-կին լրտես էլ կայ այստեղ, պօռնիկ և լրտես, շնորհիւ հայ կոմիտէների և նախկին կոմիտէի անդամների: Մատնիչներն և լրտեսների աճումը պայմանաւորւած է կոմիտէների ճարպիկութեամբ: Նրանք նշմարում են նախ յեղափոխութեան աւելի մօտ եղող անձնաւորութեանց, յետոյ մեղադրում են նրանց ունէ չգործած յանցանքի մէջ, բայց իրենց բարեհաճութիւնը ու անհուն սէրը ապացուցանելու համար՝ միջնորդում են կառավարութեան առաջ, «երախտապարտ» են թողնում: Շատերն էլ չքաւորութիւնից են դիմում այդ արհեստին: Դաւաճանների պարագլուխներից Յակոբ Բարբարաշեանը զրամանենգութեան մէջ բռնւում է. Ագամ բէկը (ժանդարմների պետը), օգտւելով առիթից, մի կլորիկ գումար շորթելուց յետոյ՝ պայման է դնում, որ և ընդունելով՝ Բարբարաշեանը փոխում է յեղափոխականի ցնցոտին՝ հագնելով դաւաճանի ծիրանին: Սէմէրճեանը ծախում է կազմակերպութեան հրացանը և վախճալով յեղափոխականի դաշոյնից, անցնում է հակառակ կուսակցութեան՝ Ագամ բէկի կուսակցութեան կողմը: Բոլորի կենսագրութիւնը ունի հա-

մանմանութիւն, շարժաթիւները երկու են՝ ստոր շահա-
սիրութիւն և երկիւր Բայց թող հասկանան այդ ազ-
գապաւ ճիւղները, որ գեռ կապրի կարմիր յիշատակա-
կանը, որի սրտոս աչքերից չի վրիպում ուէ լիբը
արարք, ուէ գարշելի, հրէշային գործողութիւն: Իսկ
ի՞նչ ասել այն երիտասարդութեան որ այսօր ինքզինք
յեղափոխական է անւանում: Եթէ երիտասարդութիւնը
գիտակցութիւն, անձնագոհութիւն, ազնուութիւն ու գոր-
ծելու, իր ապարախտ սե հայրենիքին օգտակար լինելու
բուն ցանկութիւն ունենար, պիտի թողնէ՞ր նա, որ
այսօր դաւաճանութեան և լրտեսութեան մի սե միտք
անգամ սահէր իր ազգակից եղբոր գլխից, պիտի չբռնէր
այդ միտքը նրա ուղեղի մէջ: Եթէ երիտասարդութիւնը
գիտակցէր, պիտի թողնէ՞ր, որ այսօր մեր մաքուր ու
անրիժ ընտանիքը պոռնկութեամբ ու դաւաճանութեամբ
սեւացներ մեր մաքուր ծակատը: պիտի թողնէ՞ր, որ ան-
արգել ասպարէզ առնէր ուէ Սէմերձեան, ուէ Ադամ:...

Ս Ո Ղ Մ Ո Ն Ո Վ ! Խ Ի Յ, 6 ապրիլ

Գարաբիւխէի մօտերը թիւրք զօրքերը սպանել են
երկու պուլաւըզցի գաղթականներ, որոնք գալիս էին
կովկասից: Վերագարծին նրանց բռնում, բանտարկում
են և երկու օր վերջ դէպի կովկաս են վերագաձնում:
Ճանապարհին զինուորները հրացանով խփում են նրանց,
մէկը իսկոյն մեռնում է և միւսը վերաւոր փախչում է
ու ապաստանում զիւնցի աշխրէթի Գ...րգ ալայի
գայմագամ Սէլիմ փաշայի տունը, որը նրան յանձնում է
կառավարութեան: Երկու շաբաթի չափ ամենաբարձր
յետոյ՝ նա էլ մեռնում է բանտի մէջ:

Նոյն միջոցին գարաբիւխէցի Մարտո Վալարի աղուն
ու փոթկայ ՕՏանի աղայ Միհրանին կովկասից վերա-
գառնալիս նոյնպէս բանտարկում են. մի մի ոսկի տու-
գանք առնելուց յետոյ դարձեալ վերագարծնում են
դէպի կովկաս. ասում են, որ նրանք էլ նախորդների
նման սպանւել են:

Իւջբիւխէի վանքի գիւղացիներից Պօղոս և Կոստանը
կովկասից վերագառնալու համար՝ բանտարկւած են
Բայազէդի բանտում: Նրանց տարան ռուսաց կառավա-
րութեան յանձնելու, բայց վերջինը չ'ընդունեց, ուստի
կրկին յետ վերագարծրին և այժմ Բայազէդի բանտումն
են: Պահանջում են մեծ տուգանք, որպէսզի բաց թողնեն:

Թիւրքաց զօրքերի յիսնապետ Ֆէյզի Էֆէնդին բան-
տարկեց Խուսիպուլադի գիւղացի Հովո և Քոչօ, որոնք
չըջակայ գիւղերը առևտրի և ամուսնական գործով էին
գնացել. նրանց մեղադրում էր որ կովկաս են գնացել:
Երկուսից 10 ոսկի առնելուց յետոյ միայն բաց թողեց:

Բայազէդի բանտում կան 23 հայ բանտարկալներ
որոնց մեծ մասը խաստուրցիներ են, քաղաքական յան-
ցանքով բռնւած. երկուքը գարաբիւխէցիներ են, մէկը
բայազէդցի և երեքը վանքի շրջանի գիւղերից: Անհիմն
զրպարտութիւնների պատճառաւ բանտարկւած են և
ամիսներով մնում են բանտում, առանց հարցուփորձի:

Հայ գիւղերում ապրող զինուորներն ու համիդիե-
ները գիւղերը հսկելու պատրուակով շրջում են գիւղի
մէջ և վաճառի մարդուն որ դուրս կըգայ տնից: Գիւղե-
րներն իսկ տուն են մանում և «սոված կմ» ասելով՝
մի բան են ուզում: Ինչ որ ցանկանում են՝ գործադրել
են տալիս—գրացին տնից դուրս գալու իրաւունք չունի,

ինչ որ էլ լինի: Գարաբիւխէի շրջանում համիդիականները
սպանել են Յամատ գիւղացի Աւջի Տօնօն, երեկոյեան
ուշ ժամանակ տնից դուրս գալու պատճառով: Սպա-
նում և լուր են տալիս կառավարութեան, որ փէդայուն
սպանել և վարձատրւում են:

ԵՐԵՒԱՆԻ ՅՈՅՅԻ ՏԱՐԵԴԱՐՉԻՆ

Այսօր, օգոստոսի 3-ին, լրացաւ ուղիղ մէկ տարի այն
օրից, երբ հաղարաւոր ժողովուրդը, այէկոժ ծովի պէս
յորձանքներ տալով՝ քնաց և զարկեց Էջմիածնի միա-
փող պարիսպներին, խանգարելով նրա դարաւոր նիւհը:
Խուսեց ժողովուրդը մի թիւղ հողի վրայ, որտեղ մարդիկ
խմբւում էին աղօթելու, և փոխանակ աղօթքի, բողոք
բարձրացրեց անիրաւութեան և բացարձակ յափշտա-
կութեան դէմ, գրոհ տալով դէպի Էջմիածին, ստիպելով
որ ոչ որ, ոչ մի հոգեւորական իրաւունք չունենայ աւա-
ղակային հրովարտակը օրինաւոր ծանաչել և նպաստել
նրա իրագործման:

Գնում էին ժողովուրդի բոլոր գասակարգերից, խառն
ի խուռն, ցոյցի դրօշակ բարձրացրած. գնում էին բոլորը
մի սիրտ, մի հոգի դարձած, մի գաղափարով բռնւած.
գնում էին, կանգ չառնելով ոչ մի արպելքի դիմաց, և
գնում էին որպէս հեղեղ, որը քանդում է իր ծանա-
պարհի վրայ ամեն խոչընդոտ:

Եւ գնում էր ժողովուրդը, արհամարելով ոստիկանու-
թեան գիմարութիւնը, պատուելով ստրաժնիկների շըղ-
թան, յետ քշելով զօրքերի յարձակումը, լռեցնելով
զաւակների խմբային որոտը, մի արտասովոր ոգեւորութեամբ,
մի վիթխարի մոլեգնութեամբ, որի նմանը շատ քիչ
անգամ է վիճակւած տեսնել:

Բայց ի՞նչ էր ժողովուրդի պահանջը Միթէ եկեղեցու-
կան գումարների յափշտակութիւնը և կառածների գրա-
ւումը—նիւթական այդ սոսկ կորուստը—եկել էր աղ-
մրիւրը հայ ժողովուրդի խաղաղութիւնը:

Ո՛չ, այդ քիչ բան է...

Հայոց կաթողիկոսին գարձրին իրաւապաւրդ, հայ հո-
գեւորականութեանից խրեցին շատ իրաւունքներ — հայը
չբողոքեց:

Խափանեցին Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը
և մերկերին ու քաղցածներին խնամող Բարեգործական
Ընկերութիւնը — հայը էլի չբողոքեց:

Մի անթելի բարբարոսութեամբ փակեցին հարիւ-
րաւոր հայ գայրոցներ և հաղարաւոր մանուկներ փողոց
չպրտեցին — հայը գարձեալ չբողոքեց:

Միթէ, կրկնում ենք, նիւթական այդ սոսկ կորուստը
եկել էր աղմկելու հայ ժողովուրդի խաղաղութիւնը:

Ո՛չ — նրա վրդովմունքի բողոքը այն սիստեմատիկ հա-
լածանքի դէմ էր, որը ձգտում էր հայի անհատական,
ազգային իրաւունքները խեղդելու, չէզոքացնելու:

Հայը վաղուց զգում էր մի սոսկալի հալածանք ազ-
գային և ցեղական առանձնատկութիւնների, յիշի,
սովորութիւնների և կրօնական ուրոյն իրաւունքների,
դաւանանքների դէմ. նա զգում էր մի ամարդի բռնու-
թիւն իր անհատական ձգտումների, զգացմունքների և
հոգեկան ուրոյն պահանջների վերաբերմամբ: Նա պարզ
տեսնում էր իր աւաջ դրւած ռուսացման ստոր ծրա-

գիրը ներթափանցող անհրաժեշտությունը և մի առիթ էր փնտրում ցոյց տալու իր բուն կարծիքը, որ ինքը բարոյապէս այնքան էլ մեռած չէր, որ նրա վերաբերմամբ կարելի լինէր ամեն տեսակ ոտնձգութիւններ անել և անպատիժ մնալ:

Առիթը ներկայացաւ. հրատարակեց Յունիսեան 12-ի աւազակութիւն, կողոպուտ և եկեղեցիների դանդաղ և կասկածները կոտորելու հրաման արձակող խայտառակ մանիֆէստը. ցնցեց հայ ժողովուրդը, խօսեց նրա մէջ ազգային իրաւունքների և անհատական ձգտումների բողոքի անբռնաբարելի ձայնը, և նա գլուխ բարձրացնելով ուսաց ապուշ ցարի, նենգ Պլեմէնների ու Կօլիցիների դէմ, համարձակօրէն յայտարարեց, որ նա կայ, նա կը մնայ որպէս մարդ, որպէս ազգ, թէկուզ Կովկասի իւրաքանչիւր քարը իր արիւնով ներկի:

Եւ այս խօսքերով հայը նետեց ցոյցերի ասպարէզ սպանեց, սպանեց և կը շարունակէ սպանել, մինչև որ կը վերականգնին իր բռնաբարւած իրաւունքները:

Ահա այդ կռիւի սկզբնաւորութիւնը տրեց Նրեանում անցեալ 1903 թ. օգոստոսի 5-ի հռչակաւոր ցոյցով, որի գեղեցիկ յիշողութիւնը մենք այս թուեցիկով նորոգում ենք մեր ժողովրդի մտածողութեան մէջ, որպէս մեծ օրւայ տարեգարձ:

Հ. Յ. Դաշնակ. Ինքնասպաշտ. Կովկ. Կովկաս

Թ Ե Ր Թ Օ Ն

ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՑԸ ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՍ

ՅՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏ

(Պաշտօնական արձանագրութիւն)

(Շարունակ. N° 8-ի)

Պ. ԴԵԼԿԱՍԷ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ.— Ես պարտաւորութիւն ունեմ ծանօթացնել պատգամաւորական ժողովը այն տեղեկագրի հետ, որ ստացել եմ երկուշաբթի երեկոյան Կ. Պօլսի մեր գեսպանից: Ահա այդ տեղեկագիրը, որ կրում է մայիս 31 թիւը:

Այն տեղեկութիւններից, որոնք հասել են գեսպանատուն՝ կամ վանի մեր հիւպատոսի, կամ Երզրումի փոխ-հիւպատոսութեան միջոցով, կամ թէ... — ես թողտուութիւն եմ խնդրում լուրձեամբ անցնել անունը, սա մի օտարերկրացի է, որին չեմ ուզում մատնել մարդկանց զայրոյթին... — այդ տեղեկութիւններից հետեւում է, նախ և առաջ, որ ոչ մի նմանութիւն չէ կարելի սահմանել ներկայ և 1904-ի անցքերի միջև: Զարեքը չունի այս անգամ ընդհանուր բնաւորութիւն և ըստ երեւոյթին առաջացել է մի շարք տեղական միջադէպերից: Ստոյգ է, որ զօրքի ու հայերի մէջ տեղի են ունեցել յաճախակի կռիւներ և որ ճնշումը շատ խիստ է եղել: Որոշ թիւ գիւղեր հրդեհակ են, այն է՝ Շէնըկ, Սէմալ և Ալիանք, որոնց տիրել են զօրքերը, բազմաթիւ կռիւներից յետոյ: Բոլոր երեք գիւղը այրւել ու յոկորի են վերածւել: Նոյնը եղել է և Նէլիէկուզանում, որը լցած է եղել երկու սեռի ապստանաւորներով: Նա գրավւել է յուսահատ գիւղացիութիւնից յետոյ և բոլորովին աւերւել է: Նրա անկումն է, որ վերջ է դրել Սասնոյ հայերի զինւած գիւղացիութեան: Սակայն և այնպէս, մինչև Կ. Պօլսի հասած տեղեկութիւնները անցքերի մասին անստուգութեան բնոյթն ունին, այնպէս որ անհրաժեշտ չէ տակաւին նորիսիս մօտաւորութիւն հաշտեցնել իրողութեան հետ: Զարեքը չունի միջոցներ, որոնք չեն ծածկում մեծ անցքերը, որոնք չեն ծածկում մեծ անցքերը, որոնք չեն ծածկում մեծ անցքերը: Մայիսի 6-ի ու 7-ի օրերում, 600 փախստականներ (կին, երեխայ ու ծերեր), Սասունի աւերած գիւղերից, եկան Մուշ, շրջապատւած զինուորներով: Քաղաքը լի է այդ փախստականներով, որոնք գնում են ամեն տեղ, որովմութիւն խնդրելով. և այնտեղ ծանուցանում են նոր հայ խմբումների գալուստը Սասունից. — զօրքը տէր գառնալով լեռան՝ քշում է նրանց դէպի Մուշ:

Այդ անցքերի միջոցին եղած զոհերի թիւն ևս չէ կարող որոշել: Խօսում էին հազարների մասին: Եւ կարծում եմ, որ դա չափազանցութիւն է: Պարոն... — Եւ մի չափ չէ որոշում և միայն հաստատում է, որ Մուշում ապստանւած հայերի մէջ երեւում են միմիայն ծերեր, երիտանր կամ կանայք: Նա հարց է տալիս ուրեմն՝ ի՞նչ են եղել երիտասարդները, զէնք կրելու ընդունակ տղամարդիկ: Այ մի ապացոյց չկայ, թէ նրանք բոլորը սպանւած լինեն: Նրանք կարող են փախած լինել լեռան շաւիղներով, փորձելով հասնել սահմանին. արդէն լուր կայ, թէ նրանցից մի քանիսը վերադարձել են իրենց կազաները:

Զարեքը մեծ է, չէ կարելի վիճել, բայց չպէտք է չափազանցնել և ոչ էլ նոյնացնել ներկայ անցքերը 1894-ի անցքերին: (Ընդմիջումներ ծայր. ժախակողմում): Տարակոյս չկայ, որ ապստամբութեան ճնշումը ունեցել է իբր հետեւանք՝ կոտորումը մեծ թիւով ապստամբների, նաև խաղաղ գիւղացիների, որոնք ապրում էին ֆէդայիների բնակած գիւղերում:

Ինչ վերաբերում է քրդերի գալուն՝ դեռ պարզ կերպով չէ կարելի բացատրել, ի՞նչ տեղական հանգամանքների շնորհիւ նրանք դիւրութիւն ունեին բաւական յաճախ նախորդելու զօրքերին, երբեմն էլ յաջորդելու նրանց, որովհետեւ ես գիտեմ, և իմ պաշտօնակիցների մէջ ուրիշները ևս գիտեն, որ մեծ վեզիրը իր կողմից ուղղել է վիլայէթի կառավարչին ամենաորոշ ու ամենակտրուկ հրահանգներ, որ գործողութիւնները սահմանափակեն միմիայն կանոնաւոր զօրքի միջամտութեամբ, առանց ունի ուրիշ տարրի:

Զեր հրահանգների համեմատ՝ ես հրաման եմ տալու վանի մեր հիւպատոսին՝ մնալ Մուշում Ռուսաստանի և Անգլիայի իր պաշտօնակիցների հետ, մինչև այն օրը, երբ Սասունի մէջ կատարեալ հանգստութիւն կը տիրէ:

Զէ երեւում, թէ զինուորական նոր գործողութիւն պիտի տեղի ունենայ: Զօրքերը մեծ մասամբ հեռացել են երկրից և հիւպատոսների ներկայութիւնը սկսում է ներշնչել բնակիչներին որոշ վստահութիւն: Օգտակար է, վերջապէս, որ մեր գործակալները լրացնեն տեղն ու տեղը իրենց

Զէ երեւում, թէ զինուորական նոր գործողութիւն պիտի տեղի ունենայ: Զօրքերը մեծ մասամբ հեռացել են երկրից և հիւպատոսների ներկայութիւնը սկսում է ներշնչել բնակիչներին որոշ վստահութիւն: Օգտակար է, վերջապէս, որ մեր գործակալները լրացնեն տեղն ու տեղը իրենց

Զէ երեւում, թէ զինուորական նոր գործողութիւն պիտի տեղի ունենայ: Զօրքերը մեծ մասամբ հեռացել են երկրից և հիւպատոսների ներկայութիւնը սկսում է ներշնչել բնակիչներին որոշ վստահութիւն: Օգտակար է, վերջապէս, որ մեր գործակալները լրացնեն տեղն ու տեղը իրենց

քննութիւնը կատարւած իրողութիւններէ մասին, որպէս զի յետոյ մենք կարողանալինք միջամտել թիւրք կառավարութեան առաջ խնդրի լիակատար ծանօթութեամբ:

Ահա պատմութիւնը, որ ներկայացնում է մեզ մեր դեպքը: Ես պէտք է ասեմ, որ նրա տւած տեղեկութիւնները համաձայնում են այն տեղեկութիւնների հետ, որոնք ստացւած են Լոնդոնում ու Պետերբուրգում:

Յարգելի պ. Պրէսանսէ յիշեցնում էր ձեզ այս բոլորին այն շատ կարճատեւ վիճաբանութիւնը, որ տեղի է ունեցել երկու օր առաջ անգլիական համայնքների ժողովում: Թոյլ տւէք ինձ առաջ բերել յարգելի կոմս Պերսիի արած յայտարարութեան երեք-չորս էական տողերը. «Համաձայն այն տեղեկութիւնների, որ ստացել է նորին մեծութեան կառավարութիւնը՝ 12 գիւղ այրւել կամ կործանւել են Մուշի սանջակում և 13 գիւղ Գենջ սանջակում. սակայն պարզ չէ երևում, ով է աւերողը — ապստամբները, թէ թիւրքաց զօրքերը: Վարժես թէ հիմքեր կան յուսալու, որ մեռածների թիւը համեմատաբար թոյլ է... Տարակոյս չկայ, որ հիւպատոսների ներկայութիւնը բարեբար ներգործութիւն է ունեցել»...

Ես աւելացնում եմ, պարոններ, որ Պետերբուրգ հասած տեղեկագիրները նոյնպէս հաստատում են, որ իրողութիւնները խիստ չափազանցւել են:

Սակայն, եթէ անգամ հասցենք փոքրիկ չափերի, այնուամենայնիւ, ողբալի է, որ այդ տեսակ իրողութիւններ կարող են առաջ գալ: (Շատ լաւ, շատ լաւ):

Եթէ չէ կարելի մերժել Դրան իրաւունքը ճշշելու ապստամբութիւնը, ապա կարելի է շատ իրաւացի կերպով յանդիմանել նրան, որ չնայած իր քաջորոշ յանձնառութիւններին՝ նա պահպանում է միայն պիսի վարչութիւն, ուր ապրտամբութիւնը հանդիսանում է միակ ապստանը յուսահատւած, կատաղած ազգաբնակչութեան համար: (Ժափաճարութիւններ):

Եթէ ճիշդ է, որ քրդերը ամենեին բանի տեղ չեն դնում թիւրքաց իշխանութիւնների հրամանները, գրապատճառը այն է՝ որ շատ յաճախ նրանք կարողացել են հաւատալ, որ նրանց ըմբոստութիւնը և նոյնիսկ նրանց վայրագութիւնները հայերի նկատմամբ բնաւ անխորժ չէին լինի թիւրքաց իշխանութիւններին: (Նոր ծափաճարութիւններ):

Եւ թէպէտ անխուսափելի է, որ մի ապստամբութեան ճնշման ընթացքում հարաւորները մոլորւելով կ'ընկնեն անմեղ մարդկանց վրայ, սակայն անմեղ զոհերի թիւը չափազանց պարզ վկայում է, որ զինուորները շատ էլ չեն նեղւում ընտրութեան մէջ: (Շատ լաւ, շատ լաւ):

Բաւական չէ արդարանալու համար առաջ բերել տրւած հրամանները: Պէտք է պարզ կերպով հաստատել, որ այդ հրամանները անկեղծ են և որ նրանց անկեղծութեանը հաւատում են ամենից առաջ նրանք, որոնք այդ հրամանները գործադրելու յանձնարարութիւնն ունին: (Ժափաճարութիւններ քաղաքի շտաբանների վրայ):

Սասունի դէպքերը պէտք է ալեկոծէին շրջակայ վայրերը: Մեզ տեղեկացրել են, որ կա խռովութիւն Բիթլիզում և շատ խիստ երկիւղ Մուշում: Ահա թէ ինչու

ես անմիջապէս հրահրեցի Վանի մեր հիւպատոսին՝ ճանապարհւել դէպի Մուշ և հրահրեցի նրան մնալ այնտեղ այնքան ժամանակ, որքան ժամանակ իր ներկայութիւնն ու աշխուրջ հսկողութիւնը անհրաժեշտ կը լինեն փախստականների հովանաւորութեան համար:

Միւս կողմից՝ պ. Պրսի մեր դեպքանը հրահրեց է առել՝ անյապաղ համաձայնութեան գալու իր այն պաշտօնակիցների հետ, որոնք լիազօրութիւն ունեն այնտեղ — ես գիտեմ, որ կան այդպիսիք — և ազգու կերպով գիտեմ անել Դրան, որ ապստամբութեան ճնշումը վերջացած է, որ պէտք է ոչ թէ շարունակել զինուորական գործողութիւնները, այլ ընդհանաւ կը, օգնել անմեղ զոհերին և որ քանի դեռ ազգաբնակչութիւնը կատարելապէս չհանգստանայ, մեր գործակալները պիտի մնան խռովութեան վայրերում, որ նրանք անընդհատ պիտի ղրկեն մեզ տեղեկութիւններ և պիտի միջամտեն թիւրք կառավարութեան առաջ, որ վերջ ապէս, Դուռը, հրահանգւած այնքան փորձերից, հանգէպ այն միջամտութեան, որ նա անհրաժեշտ է կացուցել Մակեդոնիայում, պէտք է, հէնց իր շահի տեսակէտից, յոյս չտած է, թէ իր պատասխանատւութիւնը բոլոր ուրիշ տեղերում ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոկ խօսք:

Խնդրում եմ պատգամաւորական ժողովին՝ հաւատալ, որ կառավարութիւնը չպիտի դադարէ իր պարտաւորութիւնը կատարել, իր բովանդակ պարտաւորութիւնը: (Բոլորն ծափաճարութիւններ):

Պ. ՆԱԽԱԳԱՀ. — Խօսքը պ. Պրէսանսէին է:

ՅՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԵՍԱՆՍԷ. — Պարոններ, մեր արտաքին գործերի մինիստրի յայանութիւնը որոշ, շատ թոյլ չափով միայն գոհացում տւին հեղինակին այն հարցապնդումի, որ արեւց ամբիօնից:

Սակայն, մեր առջև կարգադրվ պ. Պրսի մեր դեպքանի ղրկած տեղեկագիրը, ինձ թւում է, թէ պ. մինիստրը բաւականաչափ հաշի չէ առնում մէկ հանգամանք, այն՝ որ ներկայումս, թէ Մուշի դաշտում և թէ Սասունի շրջանում կատարող իրողութիւնները, ինչպէս նաև այն բոլորը, որ տեղի ունի Դրան գիւղականության յարաբերութիւնների մէջ՝ Եւրոպայի ներկայացուցիչների հետ, — որ այդ բոլորը ստիկորէն վերաբառաւորում է 1894-ի ու 95-ի մէջ անցած իրողութիւնները:

Փորձեցին — ինչպէս ես նախատեսել էի — սահմանափակել այն կսկծալի դէպքերի ծաւալը, որոնք մի քանի շաբաթից ի վեր տեղի են ունեցել Մուշում և Սասունում: Փորձեցին — և ես այդ գիտէի առաջուց — ապացուցանել, որ այդ անցքերի մեղը ընկնում է իրենց իսկ հայերի վրայ և ֆէդայիների վրայ: Այս առթիւ ես շնորհակալութիւն եմ յայտնում պ. մինիստրին, որ նա րաբհաճեց յայտարարել ամբիօնից, որ հայերի, ինչպէս և ուրիշ ճնշւած ժողովուրդների համար՝ կան այնպիսի պարագաներ, որ ապստամբութիւնը ամենաօրէն է և առաջնագոյնը բոլոր պարտաւորութիւններին: (Ժափաճարութիւններ):

Գոհունակութեամբ ընդունելով հանգերձ մեզի արւած յայտնութիւնները և մասնաւորապէս խոստումը՝ պահանջել այն տեղերում ֆրանսիայի, ինչպէս նաև ուրիշ

պետութիւնների հիւպատոսներին, որոնք մի քանի տարուց ի վեր ստեղծել են պաշտօնատեղեր այդ գաւառներում, — ես այնուամենայնիւ, ինչպէս արդէն ասացի, չեմ կարող անտես առնել, որ եթէ այդ հիւպատոսները պիտի մնան անզէն, անզոր ու անշարժ, եթէ նրանք միմիայն պարզապէս պիտի արձանագրեն իրենց աչքերի առաջ կատարող իրողութիւնները — ապա դրանից ոչինչ չպիտի շահի հայ ազգաբնակչութիւնը, դա կը լինի մի տեսակ լուռ սրբագործումն ոճիրներին: Հարկաւոր է մէկ բան՝ պաշտօնանկ անել տալ անմիջապէս — որպիսի՝ հեգնութիւն այս բառի մէջ — Զէքի փաշային ու Ֆէրիդ բէյին, մի բան, որ պահանջել են արդէն 1894-ին և որ չէ իրագործուել այն ժամանակից ի վեր:

Մինչև մենք չ'իրագործենք այդ պահանջը, մինչև մենք պաշտօնից զրկել չտանք արիւնի մարդկանց, որոնք գլուխ են կանգնած զօրքին ու վարչութեանը այդ դժբախտ վայրում, միևնոյն ոճիրները կրկնելու են՝ քրօնիքական կամ սուր ձեռի տակ, ինչ որ էլ անէր և ինչ որ էլ ասէր:

Բաւական չէ նոյնպէս տարեց-տարի, ամսէ-ամիս, շաբաթէ-շաբաթ անել գերազանցապէս անօգուտ ցոյցեր սուլթանին, որը թողնում է նրանց առանց ուշադրութեան. անհրաժեշտ է մեզ՝ կանգնել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի իրաւական անխորտակելի հողի վրայ և պահանջել նրա գործադրութիւնը 26 տարի յետոյ: Դուք դրա համար ունիք միջոցներ ձեր ձեռքի տակ: Դուք կարողացաք, մի ժամանակ, յաղթահարել օսմանեան կառավարութեան ընդդիմութիւնները և կարողացաք ստիպել նրան համակերպել ձեր ցանկութիւններին՝ անսահմանօրէն նւազ ծանրակշիռ մի գործի մէջ: Ես չեմ կարող ընդունել, ես չեմ ուզում ընդունել, որ Ֆրանսիան կարող է շարժման մէջ դնել իր նաւատորմը և և ծաւալել ու նպատակին հասցնել իր կոյովը՝ միմիայն Տուրքիաների ու Լորանդօների համար: (Ժափաճարութիւններ ծայր. ծախակողմում եւ աջակողմում):

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Առաջ ենք բերում՝ քաղաքացիական Frankfurter Zeitung-ի մի բնագործակ խմբագրականը՝ ներքաշ հայկական շարժման և հայերի դրութեան:

«Տաճիկները, որ արդէն յաճախ քողարկում են եւրոպական Թիւրքիայի մէջ կատարուող անցքերը — որպէս զի արեւմտեան Եւրոպայում չ'իմանան ճշմարտութիւնը — որքան աւելի յաճախ անում են այդ՝ ասիական Թիւրքիայի անցքերի վերաբերմամբ, մանաւանդ այն անցքերի, որոնք տեղի են ունենում Հայաստանի լեռներում: Արդէն երկար ժամանակից իվեր գալիս են այնտեղից լուրեր յեղափոխական շարժումների մասին, և մենք ինքներս շատ անգամ հրատարակել ենք տեղեկութիւններ մասնակի կռիւների մասին, այնուամենայնիւ դեռ ևս չկայ անցքերի մի ամբողջացած տեսութիւն: Էրզրումի մէջ հաստատուած Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հիւպատոսները այցելել են Մուշը, սակայն ռուսական, ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները մինչև օրս չեն հրատարակել իրենց տեղեկագրերը: Բայց քանի որ — ինչպէս հաղորդում է Վ. Պօլսի մեր իրազեկ թղթակիցը — այնտեղի լուստեղեկ շրջաններում սպասում են, սեպտեմբեր ամսում, Հայաստանի մէջ մի աւելի

մեծ յեղափոխական շարժում, և քանի որ թիւրք կառավարութիւնը գիմում է զինւորական նախազգուշական միջոցների՝ ուստի դիւանագիտութիւնը շուտով պիտի թողնէ իր ձեռնպահութիւնը և արհրաժեշտաբար պիտի զբաղէ այն խնդրով, որը մակեդոնականից նւազ կարեւոր է:

«Հայերի պահանջածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն, ինչ նրանց խոստացած է 26 տարի առաջ Բերլինի դաշնագրի ստորագրող պետութիւններից, — մի տեսակ ինքնավարութիւն Տաճկաստանի հայկական նահանգների համար:

«Այն ժամանակից, երբ հայերը՝ յուսահատուած, որ ոչ ոք չէ ուզում գոհացում տալ իրենց գանգատներին՝ մինչև իսկ Վ. Պօլսի մէջ դիմեցին բռնի գործողութիւնների, — այն օրից իվեր Արգիւլ Համիդը անձնականապէս մի անյաղթելի պարշաւ է զգացել դէպի հայերը, և նրա խորհրդատուները չէին վարանի նոր փորձի առաջ՝ հայկական վտանգը վերստին հեռացնելու արեան գետերով: Եւրոպական դիւանագիտութիւնը ծանր պատասխանատուութիւն կը բարդէր իր վրայ, եթէ Բերլինի դաշնագրով ընդունւած յանձնառութիւնները ի կատար չ'ածէր և լոկ թիւրքաց կառավարութեանը թողնէր՝ սովորական գազանային ձեռք վերջ դնելու հայերի ձգտումին՝ դէպի մի լաւագոյն վարչութիւն:

«Հայերի իղձերն ու պահանջները անիրաւացի չեն դառնում նրանով, որ նրանց իրագործման համար աշխատում է մի յեղափոխական կազմակերպութիւն, քանի որ բուն երկրում հայերը հնարաւորութիւն չունեն՝ իրենց ցանկութիւններին արտայայտութիւն տալու: Այդ կազմակերպութիւնն է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի կենտրոնական օրգանը «Դրօշակ» անունով լոյս է տեսնում Ժընէվում և որի ներկայացուցիչները գործում են ոչ միայն Տաճկահայաստանում, այլև Վոլկասում, Պարսկաստանում, նաև Ամերիկայում, Եգիպտոսում, Բալկանեան երկրներում ապրող հայերի մէջ: «Յեղափոխական Դաշնակցութիւնը» մեծ ժողովրդակաշնութիւն է վաստակել իր անխնջ գործունէութեամբ, որով նա տասնհինգ տարուց իվեր քրդերի և թիւրք պաշտօնեաների մշտական սպառնալիքներին ենթակայ հայերին պէնք է մատակարարել և փորձել է պետութիւնների միջամտութիւնը առաջ բերել՝ խոստացած ուժօրմները մոցնելու նպատակով: Երկրի ներսում կազմակերպութիւնը կենտրոնացրել է իր ուժերը գլխաւորապէս Սասունում, որը դիտում է իբրև միջնաբերդ Տաճկահայաստանի: Այդ հանգամանքը պարզում է, թէ ինչու հայերը այնքան յամառութեամբ ձգտում են պաշտպանել այն լեռնավայրը թիւրք կառավարութեան դէմ, որը շարունակ փորձեր է արել այն լեռնոտ ու կիսանկախ շրջանում զօրանոցներ շինել: Այնտեղ է, որ երեք տարուց իվեր՝ բանակ էր հաստատել շատ յիշատակւած Անգրանիկը, «Դաշնակցութեան» գլխաւոր ներկայացուցիչը: Սակայն նրա զօրքը այնքան ուժեղ չէ, որ յարձակողական դիրք բռնէ, բայց և այնպէս նա շատ անգամ մեծ աջողութեամբ յետ է մղել թիւրքաց զօրքերի յարձակումները: Նա, իհարկէ, չկարողացաւ արգելել, որ Զէքի փաշայի առաջնորդութեամբ՝ թիւրք զինւորները միացած աւազակաբարոյ քրդերի հետ՝ գահավիժէին անզէն հայերի, — կանանց, երեխաների ու ծերերի վրայ և կոտորէին: Դա եղաւ ապրիլում:

«Այնուհետև դարձեալ բազմաթիւ ընդհարումներ

առաջացան, բայց թուում է, թէ գինւորները այլևս առիթ չունեն վայրագութիւններ գործելու: Հայերը Մուշում ներկայացրել են Քրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի հիւպատոսներին այն հիմնական պահանջները, որոնց իրաւորութիւնը պիտի խաղաղացներ երկիրը: Հիւպատոսները ուղարկել են այդ ռեֆորմների առաջարկները Կ. Պոլսի զեսպաններին:

Չպիտի կարողանան պնդել, թէ այդ ցանկութիւնները անիրաւացի են. նրանցից մի քանիսը, օրինակ նրանք, որոնք վերաբերում են երկրի մէջ հսկողներ նշանակելուն, գաղթականների վերադարձին, եւրոպական հսկողութեան — համապատասխանում են նոյնիսկ այն պահանջներին, որ պետութիւնները դրել են Մակեդոնիայի նկատմամբ:

Դժբայց և այնպէս հայերը քիչ յոյս ունեն շուտով իրագործւած տեսնելու իրենց ցանկութիւնները: Անգլիան, Քրանսիան և Իտալիան հաստատապէս հակառակ լինէին պնդել հայերի առաջարկած ռեֆորմների վրայ, սակայն Ռուսաստանը, որ երբեք լըջօրէն չէ ցանկացել ամրացնել թիւրքական տիրապետութիւնը ռեֆորմների իրագործումով — այսօր բացարձակապէս թշնամական դիրք ունի դէպի հայերը: Ռուս կառավարութիւնը ոչ միայն իր երկրի մէջ է կատարել կոիւ մյուս՝ հայերի դէմ, այլ նա մինչև իսկ, — ինչպէս հաղորդեցինք մի քանի օր առաջ — թիւրքերին օգնութեան է հասցրել ուսուցիչներին՝ մի հայ ասպատակային խումբ ցրուելու միջոցին:

Չնայած այդ բոլորին, չպէտք է զարմանալ, եթէ հայերը դարձեալ և գարձեալ փորձեր անեն՝ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը առաջ բերելու: Պայմանները Հայաստանի մէջ ուղղակի անտանելի են, և Մակեդոնիայի օրինակը կարող է միայն խրախուսիչ ներգործութիւն ունենալ հայերի վրայ:

Իւ սեպտեմբեր 10 թւին մէջ՝ Temps հայկական հարցի մասին խմբագրական մէկ կը նուիրէ, որմէ առաջ կը բերենք հետեւեալը.

«Եւրոպան՝ խորասուզած յայրագոյն-Արեւելեան պատերազմի մտահայեցութեան մէջ՝ չթուիր ունենալ պէտք եղած ազդեցութիւնն ու մտքի ազատութիւնը՝ ուսումնասիրելու համար հարցեր, որոնք աւելի հին ու վայրկեանէ վայրկեան ստիպողական գաղափարներն են: Ան կը ձգէ որ դէպքերը անցնին. կարծես արեւմտեան դիւանագիտութիւնը ձեռք քաշած է թէ մակեդոնական խորունկ խառնակութիւններէ և թէ հայկական սահմանի հարցէն, որ ուժգնօրէն կը ձգտի եղեռնական կուրի մը բնոյթը վերստանալու:

«Այս վերջինին նկատմամբ սպառնալից ազդարարութիւններ չառ ու չառ կրկնուած են: Վերջին յունիս ամսուան մէջ կառավարութիւններու և ժողովուրդներու պաշտօնական ուշադրութիւնը հրաւիրուած էր ֆրանսական խորհրդարանին մէջ հարցապնդումով մը՝ Սասունի կոտորածներու վերսկսումի մասին:

«Արտաքին գործերու նախարարը՝ Զէքի փաշայի և Ֆէրիդ բէկի զոհերու մասին տրուած որոշ ճշգրիտ և վաւերական պատմութեան պատասխաններով չարիքի գոյութիւնը ճանչցած էր: Ան յայտարարած էր զիմադրութեան օրինաւորութիւնը ազգի մը համար, որ մեռ-

նիլ չուզեր: Ան խոստացած էր վերջապէս ոչինչ խնայել ոչ միայն անմեղ արեւն թափուած կանիւնը ու կանգնեցնելու, այլ նաև ապահովելու զգալի ժողովրդի մը ընկերական կեանքի տարրական երաշխիքը, բարենորոգումներու միջոցաւ:

Կիսապաշտօնական օրգանը անգամ ևս վեր հանելով պ. Ցէլքասէին ջանքերը, որոնց մասին ամեն տեղ յարգանքով խօսուեցաւ հայ գաղտնի ներկայացուցիչներու կողմէն, նոյնպէս կը շեշտէ ցարգ ձեռք առնուած միջոցներուն անբաւականութիւնը:

«Մարդկութեան բարեկամներու յաւակնութիւնները չեն որ ծայրայեղ են: Անշուշտ անոնք չեն հրաժարած և երբեք չպիտի հրաժարին Բէրլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածին իրենց համար հաստատած իրաւունքներէն: Անշուշտ ձեռք չեն քաշած և չպիտի քաշեն այն իրաւունքներէն որ 1895-ի Մայիսեան յիշատակալիւր ստեղծելու է իրենց համար՝ զայն ստորագրող պետութիւններու վրայ»:

Շարունակելով իր տեսութիւնները 8 տարիէ ի վեր սէրուութեանց բռնած ընթացքի մասին, որ կայացած է քառօրե դարէ ի վեր միմիայն պահանջելու մէջ սուլութեանէ այն միջոցները, զորոնք նոյն ինքն սուլմանը քանիցս հանդիսաւորապէս խոստացեր և գործադրութիւնը ընդունելու է, և այն դիրքի նկատմամբ, որ սուլմանը բռնեց Սասունի վերջին դէպքերու առթիւ՝ Temps կը յաւելու.

«Այսօր չարագուշակ լուրեր չըջիլ սկսած են: Կ. Պոլսու ապստամբութեան մասին կը խօսի: Ռուսական Հայաստանի սահմանագլխին վրայ դժբաղդ հայերու երկու կրակի մէջ առնուած ըլլալը տեսնուած է: Անխնայ ճնշում մը կը պատրաստուի: Եւրոպա գիտէ թէ ինչ կը նշանակէ տսիկա: Ան կրկին պիտի տեսնէ Անտոնուի սարսափները՝ եթէ հասարակական կարծիքը չվերագրուի ու լռէ:

«Զէնք կրելու վիճակին մէջ եղող հայերը իրենց համար ոչինչ չեն պահանջեր: Անոնք որոշեր են ներշնչուելու օրինակէն այն բոլոր ազգերուն, որոնք իրենց ազատութիւնը և իրենց կեանքը ձեռք անցուցին:

«Ինչ որ կը պահանջեն՝ սա է, որ իրենց կիներն ու երեխաները համախիչներու ձեռքը նոխալ քաւութեան չըլլան և անոնց հայրերուն ու ամուսիններուն արարքները անոնք չքաւեն:


«Այս պահանջի մէջ ոչ մէկ ծայրայեղութիւն կայ: Ասիկա ազատութեան պատերազմի մը մէջ պատերազմական օրէնքին գործադրութիւնն է:

«Ներքին է յուսար թէ Եւրոպան, որ 96-ի կոտորածներուն եթէ ոչ անկարեկիր՝ գէթ իրը անգործ վկայ մը ներկայ գտնուած ըլլալուն համար, իր շահերուն, ինչպէս նաև խղճին մէջ այնքան տուժեց, պիտի ուզէ միեւնոյն յանցանքը կրկնած ըլլալու պատասխանատուութիւնը խնայել իրեն՝ սահման մը գնելով դահիճներու եռանդին և թէ վերջապէս մատուցանելով անհամեմատ ծառայութիւն մը Հայաստանին, մարդկութեան և նոյնիսկ թիւրքիային, կարգադրելով արդարութեան, դաշնագիրներու և ընդհանուր օգտին համաձայն խնդիր մը, որ անդադրում կըստանայ թէ՛ հարստահարեալներու, թէ՛ հարստահարողներու և նոյնիսկ հանդիսատեսներու միանգամայն»:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԱՂԱՐՇԱԿ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

(Կ Ա Յ Ծ Ա Կ)



(«ԴժՈՒՔ» ՁԻԱՒՈՐ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴ)

Մշեցի էր, ծնւած 1875-ին: Տասնութեկ տարեկան հասակում թաղական դպրոցն աւարտելով, նա ուղարկւում է Միացեալ Ընկ. Մշոյ Ներսէսեան վարժարանը, ուր ցոյց է տալիս մեծ սէր դէպի ուսումը, իր ընդունակութեամբ սիրում է ուսուցիչներից և աւարտումն արժանանում է ոսկէ խաչ մրցանակի: Բայց ահա տարիներ անցնելով՝ մի ուրիշ սէր գալիս է բռնելու նրա ամբողջ էութիւնը. — զէնքի սէրը: Ամէն գարնան հրացանը ձեռին՝ նա մի քանի անգամ պտոյտի էր գնում լեռները, որսում էր, կամ վարժութիւններ էր անում: Այդ հասակում արդէն ուժեղ, յաղթանգամ Վաղարշակը մի քանի անգամ ընդհարումներ է ունենում քրդերի ու թիւրքերի հետ: Մի անգամ ինքը միայնակ կուում է ութ քրդերի դէմ. երեքի գլուխն է պատռում, մէկի թէն է կոտրում: Քրդերը ատում էին նրան և շարունակ սպառնում:

Մի օր որսորդութեան միջոցին էր, որ մեր քաջը պատահմամբ ծանօթացաւ Արաբոյի ընկեր՝ ալիզոնանցի Աւոնի հետ: Վերջինս ներշնչեց նրան հայրենիքի թըշնամիների դէմ կուելու գաղափարը, որ այն ժամանակ փոքրամիտ անհասանելի սեփականութիւն էր միայն: Վաղարշակի շուրջը ամէն ինչ դեռ մրափում էր և անգամ իր ուսուցիչները բացարձակապէս ընդդիմանում էին զէնք կրելու նրա սովորութեան: Մի օր Առաքելը վանքից վերադարձին, հանդիպելով իր դաբատուներից երկուսին, փորձում է սպանել նրանց, — ընկերը արգելք է լինում: 1892-ին աւարտում է դպրոցը և աւելի ազատ է զգում իրեն: Նոյն տարւայ

նոյեմբերին, եղբօր հետ միասին ուխտի են գնում Ար. Աղբիւրի վանքը, Խաս գիւղի ուխտաւորների հետ: Գիւղից 2-3 ժամ հեռու, անտառը մտած պահուն, յանկարծ լոյս ընկաւ խութեցի Լեւոյ, անուն յայտնի աւազակ քիւրդը, իր երկու ծառաներով, ժողովուրդը սոսկումից ուզեց անմիջապէս ետ դառնալ, այնքան քրդի անունը սարսափ էր տարածել ամէն տեղ: Տեսարանը տխուր և վրդովեցուցիչ էր. — հարեւաւոր մարդիկ սոսկում էին երեքի առաջ: Վաղարշակը չկարողացաւ համբերիլ և երկու ընկերներով դիմեց դէպի քրդերը, որոնք այդ տեսնելով՝ փոխեցին ճանապարհը: Բայց նկատելով, որ զինւած հայերը սպառնական հետեւում են իրենց, քիւրդ աւազակը, զէն ձգելով հրացանն ու գըլխարկը, եկաւ յարգանքով բարեկեց տղաներին, նստեց նրանց հետ, «բարեկամացաւ»: Ուխտաւորների բազմութիւնը շարած մնաց այդ անսովոր տեսարանի առաջ... Քիւրդը ճանապարհ դրեց նրանց մինչև վանքը, նոյն իսկ հայերի պահանջի վրայ՝ յետ բերեց մի մշեցի հայից նոր կողպատած իրեղէնները: Զէնքի հրաշագործ ազդեցութիւնն էր...

1893-ին Տաճարեանի ձերբակալումը և հետեւեալ տարւայ Սասունի կռիւներն ու աղէտները աւելի արծարծեցին Վաղարշակի մէջ կուելու տենչը: Մի ընկերով հետ՝ նա մի քանի անգամ անաչող փորձեր արեց՝ ոչնչացնելու դաւաճան Տէր Բարսեղին և սաստիկ վըշտացած էր, որ Դաշնակցութեան տէրօրիսաները եկան խլեցին իրենից այդ փառքը:

Մեծ կոտորածների շրջանում Վաղարշակ մէկն էր այն փոքրամիտ երիտասարդներից, որոնք զէնքը ձեռին, միշտ պատրաստ էին մնում՝ պաշտպանելու իրենց և ժողովրդին: Մուշը և շրջակայ գիւղերը ընդամենը մի երկու տասնեակ զոհեր տւին. թշնամին չմտեցաւ, կարծելով, թէ այնտեղ կայ մեծ քանակութեամբ զէնք ու կուռղ ուժեր:

«Դաշնակցութիւնը» իր ուժերի համեմատ, առաջ էր տանում երկրի մէջ «գրիժի պրօպագանդը», կազմակերպում էր զինատար ու զինավարժ խմբեր՝ ժողովրդի պաշտպանութեան համար: Վաղարշակը մտաւ այդ խմբերից մէկի մէջ: Խումբը կենդանի կապ էր պահպանում Սերոբի հետ, իսկ սրա եղբրական մահից յետոյ, օժանդակում էր Տարօնի առիւծի ցիր-ցան ձագուկներին:

1900-ից Վաղարշակը իր ընկերներով անընդհատ յարաբերութեան մէջ էր Անդրանիկի և Սասունի հայդուկների հետ, բաժանում էր նրանց վշտերն ու ուրախութիւնները, կրած ձախորդութիւններն ու յաղթանակները...

Այդ բոլորի մասին նա մանրամասն տեղեկագիրներ կայացրեց «Դաշնակցութեան» վերջին Ընդհանուր ժողովին — ուր եկել էր իբրեւ պատգամաւոր, — պատմեց երկար, բերանացի կերպով, խմբերի և իր տասնամեայ յեղափոխական գործունէութեան ուշագրաւ, յուզիչ դրւագոյները:

Առաքելը վանքի նշանաւոր կուլի նախաձեռնողներից և գլխաւոր մասնակցողներից մէկն էր Վաղարշակը: Սրտի անհուն կսկիծով դիտում էր նա, թէ ինչպէս ժողովուրդը յուսահատութիւնից օրթոգոքսութեան գիրկն էր դիմում: Հաւատափոխութեան, կամաւոր ու ակամայ ազգութեան համաճարակը հանգիստ չէր տալիս նրան և Անդրանիկի ու մի քանի ընկերների հետ վըճ-

ռեցին ուէ յանդուգն քայլով ցնցել մահացնող մթնոլորտը: Անդրանիկի հետ միասին նա վարեց բանակցութիւնները, ձեւակերպեց տեղական յեղափոխականների նւազագոյն պահանջները, որոնք ժամանակին հրատարակեցին «Դրօշակ»-ի և եւրոպական թերթերի մէջ: Ընթերցողը յիշում է այդ փոքրիկ սրտառու զիւզազներգութիւնը, ուր մի բուռն հայ ապստամբներ, ձմրան սառնամանիքներին վանքում ամրանալով, կուեցով ու պաշարւելով՝ ի վերջոյ աջողում են կտրել թշնամու շղթան և անյայտանալ դէպի լեռները...

Նւ այդպիսի շատ ուրիշ փորձութիւններից ճողպրեց մեր հերոսը, որպէս զի յետագայում արժանանար աւելի փայլուն մի ճակատամարտի, որ նա մղեց սքանչելի արիւթ թեամբ և որը յաւերժացրեց նրա սիրելի դէմքը հայ յեղափոխական տարեգրութեան մէջ:

ԱՐՇԱԿ ՍԱՆՈՍԵԱՆ

(Գ Ր Գ Օ)

Վառնայում անցեալ յունիսի 24-ին դժբախտ արկածի զոհ գնաց, դեռ երիտասարդական հասակում, մեր հին գործիչներից մէկը՝ Գրգօն: Իր ընկերների հետ լողանալու գացած ժամանակ՝ նա անդգուշաբար բարձրից նետոււմ է ծովը, կարծելով թէ ջուրը խորն է, ուժգին վարնոււմ է յատակին և փուռւմ կիսամեռ: Բժիշկների խնամքները անզօր են անցնում, և Գրգօն մեռնում է ուղեղի վնասւելուց, առանց կարողանալու ուշքի գալ:

Գրգօն ծնւել է 1870 թւին Կիւմիշխանէուժի փոքրիկ հասակում ծնողները նրան տանում են Ֆրապիզոն և տալիս են ազգային վարժարանը, ուր նա մնում է մինչև 1885 թ.: Գրգօնական այդ շրջանը անհետանք չէ անցնում Գրգօյի զգայուն հոգու համար: Նրա մէջ բուռն հետաքրքրութիւն է շարժում դէպի հայ ժողովրդի կենտրոնը, դէպի նրա ցաւերն ու բողբոջները: Իւ երբ մի օր նա իմանում է, թէ իր հայրը մասնաւոր գործերով Հայաստան պէտք է մտնի, աղաչանքով պաղատանքով լաց ու կոծով ստիպում է վերջապէս, որ իրեն էլ հետն առնի: Պատանի Արշակը երկու տարի վանայ և Մշոյ կողմերը անցկացնելուց յետոյ՝ վերադառնում է Տրապիզոն և այնտեղից էլ իր ծնողների հետ տեղափոխում է Պոլիս:

1892 թւի վերջին, երբ Դաշնակցութիւնը նոր էր հիմն դնում Պոլսում, նա եղաւ առաջին համակրողներից մէկը և հետզհետէ այն աստիճան գրաւուեց կազմակերպութեան գործերով, որ երկու տարի չանցած՝ ձգեց իր մասնաւոր պարտավորւելները և բոլորովին անձնատուր եղաւ յեղափոխութեան: Այդ թւականին էր, որ Գրգօն ձերբակալեց Էտիրնէում, ուր գնացել էր մի ձեռնարկ գլուխ բերելու: Բանտից ազատւելով, նա շարունակում էր գործը կազմակերպութեան զանազան շրջաններում, այլ և այլ պաշտօններ ստանձնելով: 1988 թւականին նա ստիպւած եղաւ բոլորովին ձգել Պոլիսը, անցնել Կովկաս, այնտեղից էլ վերջին տարիներս՝ Ամբրիկա: Բայց երկրի շարժումները հանգիստ չէին տալիս Գրգօյի անհանգիստ հոգուն: Նա վճռեց մտնել հայդուկային խմբերի մէջ և անցնել Մշոյ ու Սասնոյ կող-

մերը, նետւել մի ապարեզ, թէև իրեն համար նոր, անսովոր, բայց հրապուրիչ և խրախուսող: Նա հասաւ իր մուրաղին, կէս ճանապարհին զոհ գնալով իր անզգուշութեան:

Գրգօն անհանգիստ, անզուսպ, զիւրադրգիւ բնուորութեան աէր էր: Կա էր պատճառը, որ անձնական ընկերներ քիչ ունէր: Բայց դրա հետ միասին նրա անշահասիրութիւնը, անվեհերութիւնը, կուեցու և զոհւելու պատրաստականութիւնը մոռացնել էին տալիս նրա ամեն թերութիւնները:

Դժբախտ էր Գրգօն, որ չկարողացաւ զոհւել այն վայրերում, որոնց հետ կապած էր իր պատանեկան յիշողութիւններով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ

Լուաջ ենք բերում Ա. Հ. Կաթողիկոսի գրաւոր դիմումը Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուբէին, որ ներկայացւած է յատուկ պատգամաւորութեան միջոցով: Այդ խնդրագիրը պիտի ներկայացուի Բերլինի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններին, նաև Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահին:

Նորին Բարձրապատուութեան

Պարոն Նախագահի համընդհանրութեան Ֆրանսիոյ

Տէր Նախագահ,

Միմն 'ի հնադարեան եկեղեցւոյն Արևելեան, որ քան զամենայն եկեղեցիս քրիստոնէական մարտնչողութեան համընդհանրութեան և յըմթացս դարուց և ժամանակաց իւրով մեծագործ Արքայութեան և հեղինակաւոր Հայրապետութեան մղեաց մարտս ընդդէմ կրակապաշտութեան և մահմէտականութեան և յետ կորուսանելոյն իսկ զիւրմ սեփական ամկախութեան, առաջին երաց զդրոմս հեռաւորն Արևելից մեծապարթամ վաճառականութեամբ, յաշխարհէն հնդկաց մինչ յԱմստերդամ, եկեղեցւոյն, ասեմ և ժողովուրդն որ պահեաց զիւր կրօն ամաղարտ զոր իսկզբանէ յԱռաքելական ամսի դարուցն ըմկալաւ, պահեաց զիւր լեզուն զոր աստուածային իմն ըմկալաւ հրաշխք և եկաց մնաց ցայսօր հարազատ յիւրումն դաւանութեան, հաւատարիմ տիրող պետութեանց իւրոց և իսղաղ հետևող միայն իւրումն զարգացման ըստ մերիւոյ համազամանաց ուսման, արհեստից, երկրագործութեան, վաճառականութեան և հաւատացեալն մման ի տիրողացն իւրոց պետական ծառայութեանց, այսօր ի մոտս քսաներորդ դարու լուսաւորութեան և ազատութեան, հասեալ 'ի ծայր աստիճան յուսանալութեան և վերջին շնչոյն ընդ ձեռն իմ և իմովս տկար ծայմիւ, որ եմ տարաբախտ հովիւ չարատանջ հօտին, արկանէ զխոնարհ աղերս իւր առաջի լուսամիտ և արդարադատ Ատենի Ձերումը բարձրապատուութեան, խնդրելով զգորաւոր ծայն միջամտութեան ազատմ Ֆրանսիոյ առ յոյժ թշուառ և ճնշուող վիճակ իւր որ 'ի հայկական մահամբս օսմամբան պետութեան:

Ձեմ զամիսու 'ի յիշատակարանաց հանրապետութեան Ֆրանսիոյ, ծայն բողոքոյ և խնդրանաց ազգին հայոց ի ձեռաց մեղաց իւրեանց 'ի սահմանս Թիւրքիոյ, ընդ ձեռն վայրագ Քրդաց, Տաճկաց և Չէքքէզաց, առաջին հնչեցաւ ի դրոմս մեծ պետութեանց լուսաւորն Եւրոպիոյ 'ի 1878 ամին, յորժում գումարեցաւ վիստովորովն Բերլինի, և ես խնդրա-

կուս էլ որ յայնմամբ իբրև մեծ Արքեպիսկոպոս և մախիմ պատրիարք Կ. Պոլսոյ և առաջին բողոքաւոր առաջի օսմանեան պետութեան և զիտակ ամենայն ճնշմանց և հաշտարարութեանց, բռնութեանց և բռնաբարութեանց, շրջեցայ յԵւրոպայ, կայսրութեանց Գերմանիոյ և Աւստրիոյ, թագաւորութեան Իտալիոյ, որպէս և ընկերակիցն իմ Արքեպիսկոպոսն Խորեն Նարբէյ Մեծին Ռուսիոյ առ ազատարար կայսեր Ալէքսանդր Բ. ի, որով և իրաւացի գտնու վեհաժողովոյն զհայկական խնդիրն իմոյն ի Կաշնադրութեան վեհաժողովոյն գլխաւոր վաթսու և մի երրորդն:

Տէր Նախագահ,

Ձր համարձակ ծանօթացուցանել զԲարձրապետութիւն Ձեր երկարաբանութեամբ, այլ և զհսկութիւն իրացն չը կարիմ ծածկել, եթէ յընթացս քառորդ դարու առաւել ևս դժուարացաւ և ծանրացաւ վիճակ խաղաղ հայ ազգաբնակչութեան քան եթէ թեթեւացաւ, ծանրացաւ մորամոր հարկօք, դժուարացաւ անթիւ բանտարկութեամբ և արսուրանօք, ճնշեցաւ խիստ տանջանօք, վատթարացաւ մեծադրող գաղթականութեամբ, սպառնցաւ համազգային կոտորածովք, մազեցաւ անթիւ կրօնափոխութեամբ, մաշեցաւ անթիւ բռնաբարութեամբ, ոչ խնայեցաւ մանկանց և սպտանեաց, խլեցաւ պարկեշտութիւն կուսանաց, բիւրաւոր օրիորդաց, մերկեցաւ երկիր արեամբ բազմամեայ ծերունեաց, պղծեցաւ առագաստք բազմաթիւ հարսանց, մաշեցաւ կաշիք սրբաւնէր հոգեւորականաց, աւարեցաւ և յափշտակեցաւ բազմամեայ վատաւիք և հարստութիւնք ամենդ ժողովրդեան և լքան ցամաքեցան իսպառ կիւմը և կենդանութիւն մորա, որ կմայ զարդիս իբրև կմախք ցամաքեալ և չորացեալ: Եւ որ աղետալին է, ոչ շատացեալ պաշտօնէիցն, զօրացն, սանձարցակ քրդաց և չերքէզաց զկոտորածն ընդհանուր որ սկիզբն էառ յամին 1895 և տևեաց ցվերն 1896 ամին, արդիս իսկ ծագեալ կայ մոյն վիճակ սոսկալի կոտորածին 'ի սահմանս Սասմոյ, Մշոյ, 'ի մահմադն Բիթլիկայ և սպառնայ օրըստ օրէ տունու զընդարձակ ծաւալ և տարածիլ ընդ ամենայն գաւառս հայկականս:

Ձերդ Բարձրապետութիւն,

Իբրև զլուս ընդհանրական և առաքելական եկեղեցւոյն հայաստանեայց և իբրև հայր հոգեւոր փոքրաթիւ հայ ժողովրդեան որ ի սփիւռս աշխարհի, ուրախակից զաւակացու բախտաւորութեան և սգակից տառապանաց մոցին և չարչարանաց, անհնարին համարելով զմերկայ կացութիւն հօտին իմոյ որ ի Թիւրքիոյ, յետ պարզաբանելոյ զիսկութիւն իրացն և իրողութեանց ճշդութեամբ և ճշմարտութեամբ, գամ խոնարհ թղթովս և աղաչաւոր ծայնիս բարձեալ յիմ վրայ զծանրութիւն ութսու և հինգ ամաց և աղաչելով աղաչեմ զՁերդ վեհաճոյն ողորմածութիւն, բարձրացնել զհօր և զազատարար ծայն պաշտպանութեան Մեծին և Մարգարէին Ֆրանսիոյ 'ի պաշտպանութիւն և 'ի բարօրութիւն տառապեալ և ամենդ հօտին իմոյ որ ընդ լծով մահմէտականութեան:

Ոչ 'ի խնդիր ելանեմ կորուսեալ Թագին Արշակունեան թագաւորութեան հայոց, կամ 'ի զիտ Գայիստին Բագրատունեաց և կամ 'ի բարձուն Առիւծադրօշ խաչին Ռուբինեան, այլ յոյժ համեստօրէն աղաչեմ զթեթեւացում ծանրութեան հարկաց մերկացեալ ժողովրդեան, ազատ երթեկեկութիւն վաճառականաց և այլ դասակարգի 'ի մերքին մահաւազ և յարտասահման, վերադարձ գաղթականաց և պանդխտոց 'ի հայրենի երկիրն իրենանց և վերադարձ գրուեալ կալածոց մոցին. մերումն բանտարկելոց, ազատ պաշտպանութիւն

իրաւանց և ազատ բողոքարկութիւնք ընդդէմ ամիրաւութեանց, իրաւունք ինքնապաշտպանութեան հայոց ընդդէմ կամայականութեանց քրդաց, չերքէզաց և մոլեռանդ մահմաւականաց և վերահսկողութիւն քրիստոնեայ պետութեանց 'ի գործադրութիւն մոր սահմանեալ կարգաց և վարչութեանց:

Վասն հասուցանելոյ զայս աղերս իմ խոնարհ յԱռեան պետութեան Ձերոյ, կարգեցի ինձ մելիքապետ երկուս յարժանաւոր եկեղեցականաց իմոց զՅովսէփն Սարգսեան արքեպիսկոպոսն հայոց Ամերիկայի և զՍահակն Այվատեան արքեպիսկոպոսն հայոց Պարսկահնդկաստանի: Յուսալ յուսամ, Տէր Նախագահ, եթէ լսելի լիցին խնդիրք իմ առաջի մարդասիրութեան Ձերոյ և 'ի շնորհս ողորմած պաշտպանութեան և միջնորդութեան Մեծի Պետութեանդ, տառապեալ հօտն իմ գտնէ զփոքր ինչ ապահովութիւն և խաղաղութիւն, ոյր վասն և մնայցեմ առյաւել շնորհակալ և յոյժ խոնարհ ողջօրար վասն կենաց Ձերոց:

(Ստորագրեալ)

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մ Կ Ր Տ Ի Զ Ա Ռ Ա Ջ Ի Ն

(Կնիք հայրապետական)

1904 մայիսի 10-ի
Արարատեան Մայր Աթոռ
Ի Ս. Էջմիածին

Ն Ո Ր Հ Ո Վ Ե Ր . .

Այնքան վարժեալ ենք յոռետես լինել Պետերբուրգից ծանուցեալ «Նոր Հովերի» նկատմամբ:

Կահի՛ւ միևնույն սպանութիւնից յետոյ ամբողջ ամիս ու կէս անցած՝ ահա վերջապէս գտնեց նրա յաջորդը, Սվետոսլոյ Միրսկի, որի մասին ասում են, թէ ներշնչեալ է ազատամիտ հովերով, թէ պիտի հետեւէ հաշտարար քաղաքականութեան Ֆիների, հրէաների և ուրիշ ազգութիւնների, ինչպէս նաև ռուս ընդգիծողի տարրերի վերաբերմամբ:

Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ որքան ստոյգ են այդ լուրերը, որոնք մեծ մասամբ բղնում են ռուս կիսապաշտօնական աղբիւրներից: Յամենայն դէպս, անկարելի է թուում, որ նոր միևնույն մասամբ տէճօրի երկիւղեց մղած, մասամբ էլ պետութեան իրական շահերով ղեկավարելով՝ հրաժարէ այն բարբարոս պօլիցիական սխաւեմից, որ թագաւորում էր իր նախորդի օրով:

Ի դէպ է յիշել այստեղ ի շին առ Մ և շ չ եր կ ու մի յօդեալով, որ հրատարակեց Պլեյէի սպանութիւնից անմիջապէս յետոյ և որ ահագին ազմուկ հանեց թէ Ռուսաստանում, թէ Արտասահմանում: Դա մի համարձակ քննադատութիւն էր ուղղած Պլեյէի քաղաքականութեան դէմ: Տեղի սղութեան պատճառով՝ առաջ ենք բերում այդ յօդեալի էական կէտերից մէկը միայն:

«... Ինձ թուում է, որ քաղաքականութիւնը այլադիմադրի ու այլակրօնների վերաբերմամբ պէտք է հիմնւած լինի նրանց ազատութեան և բնիկ ռուսների հետ հաւասարութեան վրայ... Իրաւունքներով հաւասար լինելով ռուսների հետ՝ նրանք զրկւում են առիթներից և միջոցներից՝ ստեղծելու կօրպօրատիվ ուժ, միջոցառում հաւասար իրաւունքներ ունենալով՝ նրանք կազմակերպում են կառավարչական քաղաքականութեան հակառակորդ կօրպօրացիաներ (ընկերութիւններ), և ուժ գրտնելով իրենց միութեան մէջ, ոչ միայն կուում են ռուս

աղգայնութեան դէմ, այլև նոյնիսկ ստրկացնում են նրան: Դրանով է բացատրւում օրինակ, թէ ինչու Կովկասում հայերի դէմ ուղղւած միջոցները այնտեղ հասցրին, որ հայերը նւաճեցին Կովկասը»:

ՄՕՑԻՍԼՍԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՐԱՅԵՐՈՒՄԻ ԿՕՆԳՐԵՍԸ

1.

Պրօլետարիատի միջազգային բանակը աճում է օրէցօր և մարդկութեան բազմատանջ մեծամասնութիւնը, բոլոր ճնշւածները, քաջալերւելով իրենց ցաւագին մաքառումների մէջ, անձկութեամբ սպասում են այն մեծ կատաստրֆի օրին, երբ սօցիալական յեղափոխութեան ալիքների մէջ պիտի փլատակէ հին աշխարհը իր մանր ու խոշոր բռնակալներով, իր գասակարգային բաժանումներով, իր աւատական ու բուրժուական առանձնաշնորհումներով:

Եւ հին աշխարհի փլատակների վրայ պիտի կառուցւի մեծ Խնտերնացիօնալը, որ մարդկութեան լաւագոյն զաւակների տնչանքն է հղել դարերից ի վեր, բայց որ միմիայն մեր դարաշրջանում կարող է մարմնանալ թէ՛ մարդկանց գիտակցութեան և թէ՛ իրականութեան մէջ:

